

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

Պատճառաբանվածություն խնդիրն* ընդհանրապես փիլիսոփայություն, նշանագիտության ու լեզվաբանության և, մասնավորապես, բառագիտության ու տերմինագիտության դժվար, բազմիցս քննարկված, բայց մինևույն ժամանակ վերջնականապես չլուծված խնդիրներից մեկն է**։ Իր բնույթով վիճելի այս խնդիրն նվիրված ուսումնասիրություններում, բնական է որ, պետք է արտահայտվեին տարբեր և նույնիսկ իրարամերձ տեսակետներ***։

Տերմինների պատճառաբանվածության դրսևորումների և դրանց յուրահատկությունների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական առումով****։ Այսպես, այն կարող

* Օգտագործված և հիշատակված գրականության հղումներն ու մատնանշումները ստովում են բուն շարադրանքում՝ փակագծերի մեջ, թվային նշանակումներով։ Առաջին թիվը համապատասխանում է ներկա աշխատանքի գրականության ցանկում տեղ զտած աշխատությունների համարներին, իսկ երկրորդ և հաջորդ թվերը, որոնք ստորակետով բաժանվում են առաջինից, ցույց են տալիս համապատասխան ուսումնասիրությունների էջերը։

** Այսպես, լեզվաբանական տերմինաբանության խնդիրներին նվիրված Պրազայի (1960 թ.) ու Վարշավայի (1962 թ.) խորհրդակցությունների, ինչպես նաև 1969 թ. Լենինգրադում և 1975 թ. Կալինինգրադում կայացած սեմինարների մասնակիցների ուշադրության կենտրոնում էր տերմինների և ընդհանրապես լեզվական նշանի պատճառաբանվածության հարցը։ Այս մասին տե՛ս, օրինակ՝ (70, 149—151). (127, 443—445) (126, 372—373) (89) (105)։

*** Նպատակահարմար ենք գտնում տարբեր կարծիքների մասին խոսել այս կամ այն հարցի քննության կապակցությամբ։

**** Հասկանալի է, որ հեղինակը բոլորովին էլ չի հավանում ներկա աշխատանքի շրջանակներում սպառելի պատճառաբանվածության իրողության հետ կապված բոլոր հարցերի քննությունը։ Եղած ուսումնասիրությունների, ինչպես նաև մեր դիտարկումների արդյունքները հաշվի առնելով, այստեղ հիմնականում փորձ է արված՝ ա) գտնել ավելի լայն մոտեցում քննվող իրակությանը, բ) գիտության տարբեր բնագավառների լեզվի և տերմինաբանության վերլուծության (ընդ որում, արտալեզվական ու ներլեզվական մի շարք գործոնների) հիման վրա բացահայտել տերմինների պատճառաբանվա-

է նպաստել բառային միավորների հասկացական-իմաստաբանական և հասկացական-կառուցվածքային օրինաչափությունների բացահայտմանը: Սրանով էլ հիմնականում պայմանավորված է պատճառաբանվածություն ուսումնասիրության իմացաբանական և, մասնավորապես, բառագիտական-տերմինագիտական արժեքը:

Պատճառաբանվածության դրսևորումների տարբերակումը, դրանց յուրահատկությունների բացահայտումը կարևոր դեր կարող են խաղալ զարգացած ածանցական բառակազմություն և բառաբարդություն ունեցող լեզուների՝ այդ թվում, օրինակ, հայերենի համար:

Պատճառաբանվածության մասին ամբողջական և ճիշտ պատկերացումը (իր բոլոր դրական և բացասական կողմերով) կարող է առանձնապես նպաստել այնպիսի մի կարևոր հարցի լուծմանը, որպիսին տերմինների ազգային և «միջազգային» ղուգահեռ ձևերի ընտրության և ընդհանրապես գիտության լեզվում փոխառություններ կատարելու հարցում ճիշտ դիրքորոշում ընդունելն է:

Պատճառաբանվածության խնդրի ուսումնասիրության հետ կապված շատ հարցեր ընկած են գիտության լեզվի, մասնավորապես տարբերակազմական տերմինաբանության կարգավորման ու միասնականացման աշխատանքի հիմքում: Այսպես, բացահայտելով և առանձնացնելով գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածության դրսևորումները, տարբեր կարգի տերմինների պատճառաբանվածության ճշգրտության աստիճանը, դրանով իսկ հընարավորություն է ստեղծվում մշակել նպատակահարմար հանձնարարականներ, որոնց կիրառումը, թվում է, որ կարող է նպաստել տերմինների կերտման և կարգավորման՝ գիտական հողորդակցության համար հույժ կարևոր նշանակություն ունեցող գործին:

Պատճառաբանվածության դրսևորումների ու յուրահատկությունների բացահայտման համար առանձնապես հարմար օբյեկտներ կարող են ծառայել գիտական, գիտատեխնիկական, հասարակական-քաղա-

ծության էությունը, մասնավորապես նրա առանձնահատուկ դրսևորումները գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում, գ) իբրև հանձնարարականներ մշակել այն նախապայմանները և ուղիները, որոնք, թվում է, թե կարելի է կիրառել տերմինաբանության կարգավորման, հատկապես տերմինները պատճառաբանված ձևով կերտելու գործում:

քական տերմինաբանությունը (ինչպես նաև անվանակարգը) և ընդհանրապես գիտություն լեզուն ամբողջությամբ:

Տերմինագիտության մեջ գործածվող պատճառաբանվածություն տերմինը, ինչպես հայտնի է, փոխառվել է բառագիտությունից: Այս բնագավառում նման կարգի տերմինների տեղ գտնելը լրիվ օրինաչափ է, քանի որ տերմինագիտությունը ձևավորվել է բառագիտության շրջանակներում: Սակայն այս կապակցությամբ չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ տերմինագիտության առարկայի յուրահատկության հետ կապված հասկացություններն ու դրանք բնորոշող տերմինների իմաստները այստեղ կրում են ինչ-ինչ՝ առաջին հայացքից երբեմն ոչ նկատելի փոփոխություններ: Ասվածն, անշուշտ, վերաբերում է նաև պատճառաբանվածություն տերմինի իմաստին և նրա հիմքում ընկած հասկացությանը (տե՛ս նաև՝ 107, 21):

Հայտնի է, որ «պատճառաբանվածություն» հասկացությունը՝ մասնագիտական գրականության մեջ բնորոշվում է շատ ընդհանուր ձևով և միևնույն ժամանակ տարբեր հիմունքներով*։ Այս կապակցությամբ Ի. Ծ. Տորոպցևը նշում է, որ պատճառաբանվածության էությունը չի կարելի բացահայտել առանց իսկ հստակ պատկերացում կազմելու այն մասին, թե ի՞նչն է դիտվում որպես պատճառաբանվածություն (խոսքը վերաբերում է պատճառաբանվածության առարկայի յուրահատկությանը), և այն, թե որո՞նք են պատճառաբանվածության միջոցները կամ էլ ո՞րն է պատճառաբանվածության հիմքը (117, 147):

Գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում տերմինների պատճառաբանվածության դրսևորումների, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների բացահայտման գործում, հասկանալի է, որ առաջնակարգ նշանակություն ունի դիտարկման նախապայմանների և ուրրտների ճշգրիտ որոշումը:

Պատճառաբանվածությունը իրողությունը բացահայտելիս, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, անհրաժեշտ է հաշվի առնել ինչպե՛ս ներլեզվական, այնպե՛ս էլ արտալեզվական գործոնները:

Քանի որ միևնույն տերմինը մի լեզվում կարող է պատճառաբանված լինել՝ այդ նույն լեզվի համագործածական բառին հակադրվելու, ինչպես

* Հիշյալ հասկացության բառարանային բնորոշումը տե՛ս, օրինակ՝ (34):

** Այսպես, պատճառաբանվածությունն ըմբռնվում է որպես ա) բառի իմաստի պայմանավորվածություն այլ բառի իմաստով, որից այն կազմված է, բ) իմաստի և հնչյունական թաղանթի հիմնավորված կապի գիտակցում, այդ իմաստի արտահայտչականություն, գ) բառի մեջ իմաստի ներկայացման միջոց և այլն: Տե՛ս, օրինակ՝ (43, 62) (87) (89) (92, 121—136) (95, 417—423) (104, 92—99) (115, 26—37) (117, 3—178) և մի շարք այլ ուսումնասիրություններ:

նաև համապատասխան գիտական հասկացութեան հետ ունեցած շոշափելի ու հստակ կապի շնորհիվ, իսկ մյուսում՝ չպատճառաբանված, նըման հակադրութեան և կապի բացակայութեան պատճառով, ուստի գիտութեան լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածութեան էութիւնը, նրա դրսևորումները պետք է գիտարկվեն այս կամ այն լեզվի, ընդ որում, նրանց որոշակի փուլի շրջանակներում։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տերմին ունի ինչպես բառակազմական, այնպես էլ իմաստաբանական որոշակի կառուցվածք, գտնում ենք, որ գիտութեան լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածութեան դրսևորումների յուրահատկութիւնը բացահայտելիս պետք է հաշվի առնել տերմինների թե՛ հասկացական-իմաստաբանական և թե՛ հասկացական-կառուցվածքային (բառակազմական, ձևաբանական, շարահյուսական) առանձնահատկութիւնները*։

Հասկանալի է, որ քննութիւնն առաջին հերթին անհրաժեշտ է կատարել համաժամանակյա տեսանկյունով, ընդ որում հիմք ընդունելով տերմինների կերտման պատմական որոշակի ժամանակաշրջանը և նըրանց հիմքում ընկած հասկացութիւնների՝ գիտութեան համապատասխան բնագավառի տվյալ փուլի զարգացման որոշակի աստիճանին բնորոշ ըմբռնումները։

Տերմինները, ինչպես հայտնի է, որոշակի տերմինահամակարգերի անդամներ են։ Այդ իսկ առումով տերմինների պատճառաբանվածութիւնը պետք է գիտարկել գիտութեան այս կամ այն բնագավառի, նրա համապատասխան ուղղութիւնների, ուսմունքների ու տեսութիւնների շրջանակներում։

Քանի որ պատճառաբանվածութիւնը դրսևորվում է ինչպես պըրոցեսների, երևութիւնների (այսպես, օրինակ՝ գիտական հասկացութեան տերմինավորում, համագործածական բառի տերմինացում, գիտական շարադրանքներում տարբեր կարգի տերմինների գործածութիւն, գիտութեան տվյալ ճյուղում այլ բնագավառներից կատարված տերմինների փոխառութիւն ևն), այնպես էլ բառապաշարային միավորների (տարբեր բնութի ու կառուցի տերմիններ և անվանակարգային նշաններ) շրջանում, ուստի տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, մի կողմից, գիտութեան լեզվում ու տերմինաբանական համակարգերում առկա պրոցեսների, իրողութիւնների ու երևութիւնների, իսկ, մյուս կողմից, դրանցում գործառող բառապաշարային միավորների առանձնահատկու-

* Ի դեպ, քննվող խնդիրը մեկնաբանելիս, մասնագետները շատ հաճախ առաջնութիւնը տալիս են այդ կողմերից միայն մեկին։

թյունները և դրանք հստակորեն տարբերակել ընդհանուր գրական լեզվում առկա համանման իրողություններից ու միավորներից:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է ճիշտ և հստակ պատկերացում ունենալ ընդհանրապես տերմինադիտության և մասնավորապես քննվող խնդրի հետ սերտորեն առնչվող այնպիսի կարևոր հարցերի մասին, ինչպիսիք են՝ տարբերայինի ու գիտակցականի տարբերը ընդհանուր գրական լեզվում և դիտության լեզվում, գիտության տարբեր բնագավառների մասնագետների տերմինակերտման գործունեությունը, բառաստեղծման ու տերմինակերտման տարբերիչ առանձնահատկությունները, գիտական հասկացությունների տերմինացումը՝ ի տարբերություն կենցաղային հասկացությունների բառայնացման, առարկաների, իրերի անվանակարգման էությունը և հիմունքները (գիտության, տեխնիկայի, արտադրական գործունեության տարբեր բնագավառների անվանակարգային նշանների տեսակները և դրանցից յուրաքանչյուրի էական հատկությունները), տերմինների՝ տարբեր աշխարհայացքների, ինչպես նաև գիտական այս կամ այն ուսմունքի, տեսության հետ ունեցած առանձնահատուկ կապը (տերմինների մեջ գիտական տեսությունների և ուսմունքների արտացոլման իրողությունը), գիտության տվյալ բնագավառում այլ բնագավառներից կատարված տերմինների փոխառությունը (փոխառյալ տերմինների էական հատկությունները), տերմինների՝ գիտական համապատասխան հասկացությունների հետ ունեցած յուրահատուկ կապը և տերմինների բնորոշ գործառությունը, տերմինների իմաստի մեջ հասկացության հատկանիշների արտացոլման էությունը (այդ հատկանիշների տեսակները, դրանց ունեցած նշանակությունը), գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանության առանձնահատուկ բնույթը, համագործածական բառերի տերմինացման էությունը (համագործածական բառերի հիման վրա կերտված տերմինների բընույթը՝ համապատասխան իմաստների բացահայտման աստիճանի տեսանկյունից, գիտության լեզվի բառապաշարային տարբեր կարգի միավորների տերմինացման աստիճանը), ազգային և օտարլեզվյան տերմինների արժեքը գիտական միեկնույն հասկացությունը բացահայտելու տեսանկյունից, այս կամ այն լեզվի բառակազմական, հատկապես տերմինակազմական միջոցների դերը տերմինակերտման պրոցեսում, միեկնույն կառույցն ունեցող համագործածական բառերի և տերմինների յուրահատկությունները, տերմինների կառույցներից յուրաքանչյուրի բնորոշ հատկությունները, տերմինների բաղադրիչների բնույթն ու դերը, դրանց քանակի ունեցած նշանակությունը գիտական հասկացությունների բնորոշման գործում և այլն:

Մասնագիտական գրականության մեջ երբեմն հստակ ձևով չեն տարբերակվում երկու տարբեր կարգի հարցեր՝ տերմինների իրական հատկությունը և տերմինների նկատմամբ իրենց՝ ուսումնասիրողների ունեցած անհատական վերաբերմունքը: Նման դեպքերում պատճառաբանվածության՝ տերմիններին հատուկ լինելու կամ չլինելու հարցը մասնագետները որոշում են՝ ելնելով պատճառաբանված կամ պատճառաբանվածությունից զրկված տերմինների նկատմամբ իրենց ունեցած անհատական վերաբերմունքից:

Այս կապակցությամբ նշենք, որ միանգամայն տարբեր հարցեր են՝ ա) տերմինի պատճառաբանվածության կամ չպատճառաբանվածության հատկանիշներից որևէ մեկին նախապատվություն տալը և բ) ընդհանուր առմամբ ինչպիսի՞ն է գիտական տերմինն իր բնույթով՝ պատճառաբանված է, թե՞ ոչ:



Գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում, ընդհանուր գրական լեզվի և համագործածական բառապաշարի պես, պատճառաբանվածության դրսևորումներն արտակարգ բազմազան ու տարաբնույթ են: Սակայն դիտարկվող ոլորտում, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, առանձնանում են նաև պատճառաբանվածության յուրահատուկ տեսակներ: Այստեղ պատճառաբանվածությունն ընդհանուր առմամբ ունի տրամաբանորեն հիմնավորված ու գիտակցված բնույթ, որն ամեն մի առանձին դեպքում դրսևորվում է տարբեր աստիճանով ու տարբեր կերպ:

Տերմինները, իբրև ուրույն լեզվական նշաններ, ի՞նչ առանձնահատկություններով են օժտված (գործառական, հասկացական, իմաստաբանական, կառուցվածքային ևն), որոնք և հիմք են հանդիսանում գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածության տարբեր կարգի դրսևորումների համար:

Տերմիններն ընդհանուր առմամբ բնորոշում են (երբեմն էլ անվանում են) գիտության, տեխնիկայի, մշակույթի և մի շարք այլ բնագավառների հասկացություններ^{*}: Իսկ վերջիններս, ինչպես հայտնի է, գերազանցապես ընդհանրացման, տրամաբանական բարձր աստիճանի

* Հասկանալի է, որ տվյալ դեպքում ամենևին էլ մեր նպատակը չէ սահմանել «տերմին»-ը և մանրամասն խոսել տերմինի ու տերմինաբանության տեսության հետ կապված հարցերի մասին: Դրանց՝ ըստ էության բնույթունը տե՛ս մեր նախորդ աշխատանքներում՝ (15) (16) (17):

վերացարկման բնույթ ունեն: Տերմինները հիմնականում ճշգրտորեն հարաբերակցում են (կամ պետք է հարաբերակցեն) գիտական համապատասխան հասկացություններին:

Նման հարաբերակցություն շնորհիվ գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանությունը հանդես է գալիս ոչ թե իբրև տերմինների կամայական հավաքածու, այլ՝ բառերի կամ բառակապակցությունների մի այնպիսի առանձնահատուկ համակարգ, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է այդ իսկ բնագավառի հասկացությունների փոխկապակցված և փոխայայմանավորված համակարգին: Ընդ որում, յուրաքանչյուր տերմին այլ տերմինների ստորադասությունը որոշակի տեղ ունի տերմինաբանական տվյալ համակարգում, որը կախված է այդ համակարգում համապատասխան հասկացության գրաված տեղից: Տերմինաբանական համակարգերի նման ճշգրիտ և խիստ գիտական բնույթի շնորհիվ է, որ գիտության այս կամ այն բնագավառում տերմիններն օժտվում են հասկացական-իմաստաբանական, հասկացական-կառուցվածքային, ինչպես նաև գործառական առանձնահատուկ պատճառաբանվածություն:

Գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում տերմինները, կարելի է ասել, պայմանավորված են երկակի ձևով: Որոշակի իմաստ ունենալուց բացի, նրանք իրենց հասկացական բովանդակությամբ, ինչպես նշվեց, կապված են նաև տվյալ համակարգի մի շարք այլ տերմինների հետ: Լեզվի համագործածական բառերն ընդհանուր առմամբ օժտված չեն նման երկակի ճշգրիտ պատճառաբանվածությամբ: Վերջիններս, ինչպես Ռ. Ա. Բուդաղովն է գտնում, պայմանավորված են միայն լեզվի համակարգով և չունեն երկրորդ՝ զուտ գիտական պայմանավորվածություն (ԱԱ, 236):

Լեզվի համագործածական բառերի առաջացումն ընդհանուր առմամբ ունի տարբերային բնույթ (հասկանալի է, որ տվյալ դեպքում բոլորովին էլ չեն անտեսվում առանձին գրողների, հեղինակների բառաստեղծական նորարարությունները), այն դեպքում, երբ տերմինների կերտումը և գիտական ու գործնական «ըրջանառության» մեջ նրանց գործադրումը մեծ մասամբ կատարվում են գիտակցված՝ տրամաբանորեն հիմնավորված և պատճառաբանված ձևով:

Նոր տերմինների պահանջումները, ինչպես հայտնի է, մշտապես աճում է: Իրականում նոր տերմինների անհրաժեշտությունը զգացվում է այն դեպքում, երբ ստեղծվում է ինչ-որ նոր բան կամ ծագում են նոր հասկացություններ ու գաղափարներ: Հասարակական կյանքի, գիտության և տեխնիկայի զարգացումն իրենց հերթին նոր տերմինների ստեղծման պահանջներ են առաջադրում այս կամ այն բնագավառի

մասնագետներին: Փաստորեն, գիտության լեզվի բառապաշարի, առանձնապես տերմինաբանության համալրումն ընդհանուր առմամբ շունի տարերային ու կամայական բնույթ, քանի որ նոր տերմիններն այս կամ այն համակարգի մեջ մեծ մասամբ մուտք են գործում անհրաժեշտության դեպքում, այն է՝ տրամաբանորեն հիմնավորված և պատճառաբանված կերպով:

Գիտության տարբեր բնագավառներից կատարված տերմինների փոխառությունը և այս կամ այն բնագավառում դրանց գործածությունն ընդհանուր առմամբ ունեն հիմնավորված և պատճառաբանված բնույթ: Նման երևույթի դրսևորումը, ինչպես ցույց է տալիս քննությունը, պայմանավորված է գիտության տվյալ և մի շարք այլ բնագավառների ուսումնասիրվող որոշ իրողությունների, պրոցեսների ու միավորների համընկնությունամբ, նոր գաղափարների, հասկացությունների, ինչպես նաև ուսումնասիրության մեթոդների ներդրմամբ և այլ կարևոր հանգամանքներով:

Գիտության տարբեր բնագավառներից փոխառված տերմինները տվյալ համակարգում ընդհանուր առմամբ չեն ընկալվում մեխանիկորեն, քանի որ ամեն անգամ անհրաժեշտաբար դրանց տրվում է յուրահատուկ բացատրություն, որը, սակայն, արմատապես չի փոխում նման կարգի տերմինների կողմնորոշության և պատճառաբանվածության հատկությունը: Բայց միևնույն ժամանակ, փոխառյալ բնագավառում տերմինները կարող են ձեռք բերել այլ կարգի պատճառաբանվածություն, քանի որ այստեղ նրանք ստանում են նոր իմաստավորում և իրենց հասկացական բովանդակությամբ տարբերվում են փոխառու բնագավառի այդ նույն տերմիններից:

Տերմինները, ինչպես Գ. Օ. Վինոկուրն է ժամանակին նկատել, ոչ թե «ի հայտ են գալիս», այլ «հնարվում», ստեղծվում են (52, 4)*:

Տերմինները գիտության տարբեր բնագավառների մասնագետների կողմից հաճախ ստեղծվում են ըստ սխեմայի, ըստ ամբողջական համակարգերի**:

* Գիտության լեզվում մեծ մասամբ հայտնի են նույնիսկ տերմինների ստեղծման ժամանակաշրջանը (անգամ՝ ճշգրիտ թվականները), առանձին տերմիններ և տերմինների ամբողջական համակարգեր կերտող հեղինակները, հանգամանքներ, որոնք համարյա հնարավոր չէ պարզել լեզվի համագործածական բառերն ուսումնասիրելիս: Այսպես, հայտնի է, որ անոթ և կառոտ տերմիններն առաջին անգամ XIX դ. 40—50 թթ. գործածել է Ֆարադեյը (ի դեպ, նրան է պատկանում նաև լոս տերմինը): Տե՛ս (42):

** Նման իրողությունը, ինչպես հայտնի է, ակնառու կերպով դրսևորվել է քիմիայի տերմինների և անվանակարգային նշանների ստեղծման գործում: Այս մասին տե՛ս նաև (41, 14):

ներն այնպես կերտել, որ դրանք հնարավորության սահմաններում ունենան մասնագիտական կողմնորոշման բնույթ և կարողանան գաղափար տալ համապատասխան առարկաների, իրակությունների ու երևույթների մասին*:

Տերմինները, փաստորեն, չեն կերտվում առանց որևէ հիմնավորման, նրանք մեծ մասամբ ունեն իրենց բացատրությունը՝ պատճառաբանությունը:

Իհարկե, տեսականորեն հնարավոր է, որ ստեղծվեն զուտ պայմանական, բոլորովին չպատճառաբանված տերմիններ, բայց, հասկանալի է, որ նպատակահարմար չի լինի դրանք գիտական ու գործնական «ըզրջանառություն» մեջ դնել, քանի որ նման «տերմինաստեղծությունը», անկասկած, կհակասի ողջամտությանը (104, 95)**:

Գիտության զարգացման հետ մեկտեղ ավելի ակնառու է դրսևորվում հասկացությունների տերմինավորման և տերմինների կերտման պատճառաբանվածության հետևյալ իրողությունը: Տարբեր բնագավառների մասնագետներն ամեն կերպ աշխատում են տերմիններն այնպես կեր-

* Հայտնի է, թե ժամանակին ինչպիսի երկար փնտրումների մեջ է եղել Նորբերտ Վինբերը՝ իր ստեղծած գիտության բնագավառը հարմար անունով բնորոշելու հարցում: Այս կապակցությամբ նա գրում է, որ ինքը ձգտում էր գտնել մի այնպիսի բառ, որը չազավաղեր իր գրքի իմաստը: Այդ իսկ պատճառով, Վինբերը անհրաժեշտ բառը վերջում սկսեց որոնել ղեկավարման կամ կարգավորման բնագավառի հետ կապված տերմինների մեջ: «Միակ բառը, որ նա կարողացա ընտրել,—գրում է նա,—հունարեն kybernetes բառն էր, որը նշանակում է «ղեկակալ», «ղեկապետ»: Եվ քանի որ իր գտած բառը գործածվելու էր անգլերենով, ուստի Վինբերը նախապատվությունը տվեց այդ լեզվի արտասանությանը, կիրառեցի տերմինն էլ ըստ Վինբերի նախընտրելի էր նրանով, որ այն մյուս բոլոր բառերից ավելի ճշգրիտ էր բնորոշում «ամենատարբեր բնագավառներում կիրառվող կարգավորման ու ղեկավարման համապատասխան արվեստի գաղափարը...» (25, 390—391):

** Տվյալ ղեպքում կարևոր է ճիշտ պատկերացում ունենալ նաև այն հարցի մասին, թե գիտակցականի ու արհեստականի տարրը ի՞նչ աստիճանով է դրսևորվում գիտության և ընդհանուր գրական լեզվում: Այս կապակցությամբ Ե. Ա. Բոկարևը գտնում է, որ լեզվի մեջ հնարավոր չէ գտնել բացարձակ արհեստական մի բան, օրինակ, հնարված նոր բառ, որը բոլորովին կապված չլինի լեզվական հայտնի տարրերի հետ: Նման իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արհեստականը համարյա միշտ էլ բնականի մշակումն է: Այսպես, Վան Հելմոլտի ստեղծած գազ բառը (XVII դ.), որը սովորաբար բերվում է որպես արհեստականի օրինակ, մի շարք մասնագետների կարծիքով հարաբերականորեն է արհեստական, քանի որ այն մի քանի բառերի բաղադրության արդյունք է (գերմ. Geist «ոգի» և Blase «պղպղակ», հուն. «բառս»): Չնայած որ բոլոր լեզուներում էլ գոյություն ունեն հնարված բառեր, բայց դրանք, որպես կանոն, ստեղծվել են ընական նյութի գործածության ճանապարհով՝ տվյալ լեզվում կամ այլ լեզուներում եղած բառերով ու արմատներով (41, 13):

տել, որ դրանք ըստ հնարավորին համապատասխանեն այն աշխարհա-
յացքին, գիտական այն տեսություններին և ուսմունքներին, ինչպես
նաև հասկացությունների այն ըմբռնումներին, որոնց ներկայացուցիչ-
ներն են իրենք: Փաստորեն, տարբեր բնագավառներում ձևավորված
գիտական նոր տեսություններն ունեն հասկացությունների իրենց
ըմբռնումներին համապատասխանող և բնորոշ տերմինաբանություն:
Այսինքն, տերմինները, սովորաբար, ունեն տրամաբանորեն հիմնա-
վորված և պատճառաբանված իմաստավորում ու գործածություն, քանի
որ դրանք ծագում են որոշակի տեսությունների շրջանակներում: Ընդ-
հանուր առմամբ այսպիսի պատճառաբանվածություն ունեն տերմինա-
վորումը, ինչպես նաև տերմինագործածությունը գիտության տարբեր
բնագավառների զարգացման որոշակի փուլերում:

Համընդհանուր ճանաչում գտած տարբեր կարգի տերմինների
ուսումնասիրությունը նույնպես հաստատում է այն իրողությունը, որ
դրանց մեջ, իսկապես, այս կամ այն աստիճանով իրենց արտացոլումն
են գտել տարբեր աշխարհայացքները, գիտական տարբեր տեսություն-
ները և ուսմունքները*: Նման հանգամանքի շնորհիվ էլ տերմինները գի-
տական որոշակի տեսության շրջանակներում օժտվում են այս կամ այն
աստիճանի գիտակցված պատճառաբանվածությամբ:

Հայտնի է, որ գիտական հասկացությունների տերմինավորումը կա-
տարվում է ընդհանուր գրական լեզվում եղած բառերի գործածությամբ՝
դրանց մեջ նոր՝ մասնագիտական իմաստի ներդրման ուղիով կամ էլ
բառերի, ինչպես նաև բառերի բաղադրիչների միջոցով նոր բառերի
կերտմամբ, այսինքն, ըստ տվյալ լեզվում գործող բառերի ու բառա-
կապակցությունների կազմության կաղապարների:

Հիշյալ երկու դեպքում էլ, ինչպես այս կապակցությամբ մասնա-
գետների մեծ մասն է գտնում, առաջադրված գիտական հասկացության
տերմինավորման համար լեզվական այս կամ այն նշանի ընտրությունը
և գործածությունը ոչ թե կամայական է, այլ՝ պատճառաբանված է (94,
22) (96, 66—67): Սա պատճառաբանվածության սովորական, ամենից

* Ուստի գիտական որևէ տեսության մասին լրիվ պատկերացում կազմելու համար,
թվում է, որ ոչ միայն պետք է իմանալ, թե ընդհանրապես ի՞նչ է բնորոշում այս կամ
այն տերմինը, այլ նաև՝ թե տերմիններից յուրաքանչյուրը հասկացական ի՞նչ հարա-
բերությունների մեջ է գտնվում տվյալ տեսության համակարգ կազմող մնացած տեր-
մինների հետ՝ ի տարբերություն գիտության այդ իսկ բնագավառի ուրիշ տեսություն-
ների, որոնք գուցե և օգտվում են հասկացությունների և դրանք բնորոշող տերմինների
մի այլ համակարգից:

հաճախակի դրսևորվող տեսակն է*։ Սակայն իրականում այն միշտ չէ, որ շոշափելիորեն նկատելի է**։

Գիտության լեզվում հասկացությունների տերմինավորման համար ընտրված համագործածական բառերը, ինչպես նշվեց, հանդես են գալիս ոչ թե իրենց սովորական իմաստով, այլ գործածվելուց առաջ ենթարկվում են իմաստի մասնագիտացման***։ Այս կապակցությամբ Վ. Ն. Սեմիչևը իրավացիորեն առարկում է Ծ. Ա. Բիստրովայի այն տեսակետին, ըստ որի, եթե համագործածական բառը դառնում է տերմին, ապա բառի նախկին՝ թափանցիկ ու հստակ պատճառաբանվածությունն արդեն չի զգացվում (111), (46)****։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ ընդհանուր գրական լեզվում չպատճառաբանված բառը, դառնալով տերմին, ձեռք է բերում առանձնահատուկ պատճառաբանվածություն (տե՛ս նաև 107, 22)։

Փաստորեն, լեզվի համագործածական բառերի տերմինացման պրոցեսը (բառի՝ տերմինի դերում հանդես գալու երևույթը) ունի ոչ թե ինքնանպատակ, այլ՝ այս կամ այն աստիճանով պատճառաբանված բնույթ։

Պատճառաբանվածության դրսևորման գործում կարևոր նշանակություն ունի առարկաների ու երևույթների հատկանիշների և նրանց

* Պատճառաբանվածության նման տեսակը Գ. Պ. Մելնիկովը համարում է պատճառաբանվածություն ըստ իմաստի (91, 4—5)։

** Չնայած վերահիշյալ հանգամանքին, քննվող իրողությունն ուսումնասիրության ղեկավարում, թվում է, որ անպայմանորեն պետք է հաշվի առնել պատճառաբանվածության նման տեսակի առանձնահատուկությունները, որպեսզի հնարավոր լինի վեր հանել նաև գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում առկա պատճառաբանվածության մյուս դրսևորումները։

*** Գիտության լեզուն հուզարտահայտչականությունից զերծ լինելու և իր տրամաբանական բնույթի շնորհիվ, ընդհանուր առմամբ որոշակի ազդեցություն է թողնում տերմին դարձած պատճառաբանված այն բառերի վրա, որոնք ընդհանուր գրական լեզվում ծագել են որպես այս կամ այն հասկացության փոխարինական անվանումներ։ Պատճառաբանվածությամբ օժտված նման կարգի տերմինները (այսպես, օրինակ՝ շրջայական ռեակցիա, էլեկտրոնային ուղեղ, հիշող սառլ են) հիշյալ ոլորտում որոշ չափով կորցնում են իրենց արտահայտչականությունը։ Բայց և այնպես դրանք պահպանում են պատկերավորության մի ինչ-որ երանգ, որը, սակայն, դրսևորվում է ոչ այնքան գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում առանձին վերացած, որքան՝ ընդհանուր գրական լեզվի շրջանակներում ամբողջությամբ (տե՛ս նաև՝ 81, 204)։

**** Մասնագետների մի մասը գտնում է, որ նման հիմունքով կերտված տերմինների իմաստը կարելի է հեշտությամբ պատճառաբանել թեկուզև այն առումով, որ խոսողների գիտակցության մեջ զեռես պահպանվել են այն հատկանիշները, որոնք ընկած են եղել բառ-անվանումների հիմքում (86, 73)։

անունների հիման վրա կատարված տերմինավորումը*։ Հատկանիշը, որը նախապես ունի լեզվական արտահայտություն և ընկած է տերմինավորման հիմքում, ընդհանուր առմամբ պատճառաբանում է այդ անվանումը։

Քանի որ ներկա շրջանում ժամանակակից գիտական, տեխնիկական բոլոր տերմիններն ընդհանուր առմամբ կերտվում են լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի ու տերմինների հիման վրա, ուստի և յուրաքանչյուր նոր տերմինի ու հններից շատերի մեջ կարելի է առանձնացնել տերմինի բառացի նշանակությունը (այսինքն, նրա բաղադրիչների մեջ եղած իմաստը) և նրա բովանդակությունը կամ իրական իմաստը (86, 24)։

Տերմին դարձած համագործածական բառերի (ինչպես նաև դրանց բաղադրիչների) իմաստը այս կամ այն աստիճանի համապատասխանության մեջ է գտնվում տերմինացվող հասկացության գլխավոր հատկանիշների հետ։ Ի դեպ, բառային իմաստը կարող է լրիվ կամ մասնակիորեն համընկնել հասկացությանը։ Այս կապակցությամբ մասնագետները գտնում են, որ համագործածական բառի իմաստը որքան ավելի է համընկնում հասկացությանը, այնքան ավելի ակնառու է դրսևորվում տերմինավորման պատճառաբանվածությունը (94, 22) (96, 67—68) (74, 10—11)։

Փաստորեն, հասկացական-իմաստաբանական առումով պատճառաբանվածությունը դրսևորվում է տերմինի բովանդակության և նրա ներքին ձևի միջև նպատակահարմար կապի առկայության շնորհիվ։ Հետևապես այն տերմիններն են պատճառաբանված, որոնց ներքին ձևը համապատասխանում է բովանդակությանը կամ էլ ճիշտ է կողմնորոշում այն։ Այլ խոսքերով, տերմինը պատճառաբանված է, եթե նրա ներքին ձևը մատնանշում է հասկացության սահմանման համար անհրաժեշտ հատկանիշը**։ Եվ ինչքան ավելի են տերմինի իմաստի մեջ արտացոլված համապատասխան հասկացության էական հատկանիշ-

* Մասնագետները գտնում են, որ հատկանիշների հիման վրա կատարված անվանակոչությունն իր մեջ ներառում է հետևյալ երեք պահերը. առաջին՝ առարկայի պատճառաբանող իրական հատկանիշը, այսինքն, անվանման ոչ լեզվական հիմքը, երկրորդ՝ պատճառաբանող հատկանիշի լեզվական արտահայտությունը, երրորդ՝ լեզվական նյութի (որով արտահայտված է պատճառաբանող հատկանիշը) հիման վրա նոր անվան ստեղծման միջոցը (88, 27)։

** Վ. Մ. Օվչարենկոն գտնում է, որ իմաստաբանորեն պատճառաբանված նշանները շատ հաճախ իրենց հերթին կազմված են լինում սուբստանցիոնալ կերպով պատճառաբանվածների հիման վրա, որոնք, նրա կարծիքով, ընկած են լեզվի նշանային համակարգի ծագումնաբանական հիմքում (95, 422)։

ները, այնքան ավելի է այս կամ այն տերմինը պատճառաբանված։ Բնական է, որ ամենաբարձր աստիճանի պատճառաբանվածությունը օժտված կլինեն այն տերմինները, որոնց մեջ արտացոլվել են հասկացություն անհրաժեշտ և բավարար հատկանիշները (86, 108)։

Պատճառաբանվածությունը դրսևորվում է երկու՝ սեռային և տեսակային հատկանիշներով։ Այս կապակցությամբ Ե. Պ. Ստեմկովսկայան գտնում է, որ առաջատար դերը պատկանում է հիմնական՝ սեռային հատկանիշին, քանի որ այն կայուն է՝ ի տարբերություն տեսակայինի, որն իր բնույթով փոփոխվող է։ Ընդ որում, սեռային հատկանիշը պահպանվում է անգամ տեսակայինի կորստի դեպքում (114, 456—457)։

Փաստորեն, տրամաբանական բարձր աստիճանի պատճառաբանվածության միտումը, որն, ի դեպ, ավելի բնորոշ է գիտակցորեն ըստիդիվող տերմինաբանական համակարգերին, ենթադրում է տերմինի իմաստաբանական ձևի մեջ արտացոլվող հատկանիշների հիմնավորված ընտրություն։ Այս կապակցությամբ Վ. Մ. Օվչարենկոն գտնում է, որ տրամաբանական պատճառաբանվածությունը, որը պատճառական պայմանավորվածության բարձրագույն տեսակն է, գոյություն չունի առանց պատճառաբանվածության մյուս տեսակների, քանի որ տերմինի մեջ հասկացության՝ նպատակահարմար կերպով ընտրված հատկանիշները, որպես կանոն, դրսևորվում են իմաստաբանական պատճառաբանվածության հիմքի վրա (95, 423)։

Հասկանալի է, որ պատճառաբանված բոլոր տերմիններն օժտված չեն համապատասխան իմաստների բացահայտման նույն աստիճանով*։ Այսպես, կան տերմիններ, որոնք բավարար չափով են բացահայտում հասկացությունների մեջ արտացոլված երևույթների էական հատկությունները։ Կան տերմիններ էլ, որոնց պատճառաբանվածության հիմքում ընտրված է կամ ոչ էական, կամ էլ մի այնպիսի հատկանիշ, որն ընդհանուր է շատ առարկաների համար (89, 31)։ Բնական է, որ նման

* Այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, ըստ որի անհրաժեշտ է անվան պատճառաբանվածությունը տարբերել բառի իմաստից։ Պատճառաբանվածությունը, ինչպես այս տեսակետի կողմնակիցներն են գտնում, միայն առարկայի անվանման ուղին է, այն չի բացահայտում, թե ինչպիսին է առարկան, որը ստացել է ավյալ անվանումը։ Պատճառաբանվածությունը, նրանց կարծիքով, բառիմաստի հարաբերությամբ ունի մասնավոր, պատահական ու ոչ էական բնույթ, քանի որ այն արտացոլում է բառով արտահայտված երևույթի միայն ինչ-որ մի կողմը. մի հատկանիշը, այն դեպքում, երբ յուրաքանչյուր երևույթ բնութագրվում է բազմաթիվ հատկանիշներով, իսկ շատ երևույթներ էլ օժտված են մեկ՝ իրենց համար ընդհանուր հատկանիշով։ ՏԵ՛ս, օրինակ՝ (88, 26)։

կարգի տերմինները շեն կարող լրիվ բացահայտել համապատասխան իմաստները*:

Ինչ վերաբերում է լայն տարածում գտած այն կարծիքին, ըստ որի պատճառաբանող հատկանիշն ընդհանուր առմամբ պատահական ու կամայական է, ապա նման դեպքում լեզվական երևույթների գնահատման հարցում, թվում է, որ ցուցաբերվում է ոչ ճիշտ՝ միակողմանի մոտեցում: Մի՞թե հնարավոր է, որ գիտական անվանումներին ու տերմիններին կյանք տված հատկանիշը լինի պատահական և ոչ հիմնավորված (թերևս այն երբեմն կարող է լինել ոչ այնքան էական կամ ճշգրիտ):

Առարկաների և երևույթների հատկանիշների էական ու ոչ էական լինելու մասին պատկերացումն, ինչպես հայտնի է, փոխվում է մարդկային ճանաչողության զարգացման հետ կապված: Այն, ինչ առաջ համարվում էր էական, ժամանակի ընթացքում կարող է դառնալ ոչ էական և ընդհակառակն (այսպես, օրինակ, այն տարբերիչ հատկանիշի ընտրությունը, որի հիման վրա կերտվել է առում տերմինը): Ուստի և, ինչպես այս կապակցությամբ իրավացիորեն գտնում է Ա. Ի. Մոխսեևը, նպատակահարմար է խոսել պատճառաբանող հատկանիշների էական ու ոչ էական լինելու մասին ոչ թե ընդհանրապես կամ վերացականորեն, այլ որոշակի հանրություն տեսանկյունից, որը ստեղծել է իրականության առարկաների ու երևույթների այս կամ այն անվանումը՝ որոշակի իրադրություն և նպատակների հաշվառմամբ (92, 127—128):

Շատ մասնագետներ էլ այն համոզմանն են, որ պատճառաբանող հատկանիշները, որոնցով իրականության առարկաներին ու երևույթներին անվանումներ են տրվում, ոչ թե պատահական, այլ առավել բնորոշ և էական են (տե՛ս օրինակ՝ 58, 58), (66, 72), (124, 151): Ըստ նրանց, բառերը ծագում են առարկաների ու երևույթների ամենաէական տարբերիչ հատկանիշների վերացարկման հիման վրա: Այս կապակցությամբ Ն. Մ. Շանսկին գտնում է, որ առարկաներն ու երևույթներն անվանվում են ըստ այն հատկանիշի, որը բավարար չափով հնարավորություն է տալիս դրանք տարբերել այլ առարկաներից ու երևույթներից (124, 151):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատճառաբանվածությունը տերմինների շրջանում դրսևորվում է տարբեր աստիճանով: Այսպես, բարձր աստիճանի պատճառաբանվածությունը օժտված են լեզվական այն նշանները, որոնք միաժամանակ և՛ համազործածական բառեր, և՛ տերմիններ են, իսկ ավելի ցածր աստիճանով՝ այն տերմինները, որոնք

* Իմաստի բացահայտման աստիճանի տեսանկյունից պատճառաբանված տերմինների շրջանում կարելի է առանձնացնել մի շարք այլ տեսակներ:

կերտվել են միայն համագործածական ձևույթների հիման վրա (տե՛ս նաև՝ 107, 22):

Ինչպես հայտնի է, գիտությունն այս կամ այն բնագավառի լեզվի բառապաշարային ոչ բոլոր միավորներն են, որ ունեն տերմինացման նույն աստիճանը: Դեռևս վերջնականապես շտեմմինացված լեզվական նշաններն օժտված չեն տրամաբանական բարձր աստիճանի պատճառաբանվածությունով:

Պատճառաբանվածության դրսևորման աստիճանը և յուրահատկությունները կախված են նաև տերմինների՝ գիտության որոշակի բընագավառներին պատկանելու հանգամանքից (74, 20—21), ինչպես նաև վերջիններիս զարգացման աստիճանից: Քանի որ գիտության տարբեր բնագավառները, ինչպես հայտնի է, գտնվում են իրենց զարգացման տարբեր փուլերում, ապա նման իրողությունն իր հետքն է թողնում համապատասխան բնագավառում գործառող տերմինների հատկությունների՝ այդ թվում և նրանց պատճառաբանվածության վրա: Եվ տրամաբանական ավելի բարձր աստիճանի պատճառաբանվածությունը օժտված են այն տերմինները, որոնք ծառայում են գիտության առավել զարգացած բնագավառներին: Բացի այդ, պատճառաբանվածությունը ավելի բարձր աստիճանով է դրսևորվում կարգավորված տերմինների շրջանում:

Գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում, լեզվաբանների մեծ մասի համոզմամբ, հազվադեպ են հանդիպում բոլորովին չպատճառաբանված նշաններ, քանի որ գիտական հասկացությունների բնորոշման համար, ինչպես նշվեց, դերազանցապես ընտրվում են այս կամ այն լեզվում եղած համագործածական բառերը (74, 10), որոնք և վերածվում են տերմինների ու գիտական այլ բնույթի անվանումների:

Հետաքրքիր է պարզել այն հարցը, թե բացի տերմիններից, գիտության լեզվի բառապաշարի մի այլ կարևոր շերտը՝ անվանակարգային նշաններն արդյոք օժտված են պատճառաբանվածությամբ, թե՛ ոչ: Այսինքն, անվանակարգումն իր բնույթով լրիվ պայմանակա՞ն է, թե՞ այս կամ այն աստիճանով պատճառաբանված է: Ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում պետք է նախապես ճիշտ և հստակ պատկերացում ունենալ անվանակարգային նշանների բնույթի մասին առհասարակ:

Զխորանալով հարակից հարցերի քննության մեջ*, նշենք, որ ինչ-

* Նման հարցերի քննությունը տե՛ս մեր նախորդ աշխատանքներում (71) (15, 210—211, 228—233):

պես գիտութեան տարբեր բնագավառների, այնպես էլ նույն բնագավառի շրջանակներում գործառուժ են ոչ միևնույն կարգի ու բնույթի անվանակարգային նշաններ: Այսպես, քիմիայի, աշխարհագրութեան, բուսաբանութեան, կենդանաբանութեան, կազմախոսութեան, բժշկութեան և գիտութեան մի շարք այլ ճյուղերում բացարձակ վերացական ու պայմանական նշաններից բացի կան նաև այնպիսի անվանումներ, որոնք իրենց բնույթով տարբերվում են նշվածներից և կարծես մոտենում են տերմիններին:

Բացարձակ վերացական ու պայմանական նշանները, կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ պատճառաբանված չեն, քանի որ դրանք չեն արտացոլում նշանակված առարկաների հատկություններն ու հատկանիշները, և դրանց համար մեծ մասամբ նշանակություն չունի այն հանգամանքը, թե ինչու՞ տվյալ առարկան անվանված է այսպես և ոչ՝ այնպես (տե՛ս, օրինակ՝ 52, 8): Այսինքն, նման կարգի անվանումներն օժտված չեն հստակ կողմնորոշությամբ կամ մի այլ հատկությամբ, որով հնարավոր լինելու պատկերացում կազմել նշանակվածի մասին*:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրենց բնույթով տերմիններին մոտեցող անվանակարգային նշաններն ունեն այս կամ այն աստիճանի պատճառաբանվածություն, քանի որ դրանց ստեղծման գործում կարևոր դեր է խաղացել անվանակարգման՝ տրամաբանորեն հիմնավորված սկզբունքը: Այսպես, բույսերի ու կենդանիների անվանումների մի ղգալի մասը, տեխնիկայի և արտադրական գործունեության տարբեր բնագավառների անվանակարգային նշաններից շատերը իմաստաբանական առումով պատճառաբանված են, քանի որ դրանք իրենց մեջ ներառում են համապատասխան բույսի, կենդանու, մեքենայի և այլ կարգի առարկաների հատկանիշներից մեկը, երբեմն էլ՝ մի քանիսը: Տվյալ դեպքում, անշուշտ, կարևոր դեր է խաղում այն հանգամանքը, թե նշանակումների հիմքում ի՞նչ կարգի հատկանիշներ են ընկած:

Անվանակարգային նշանների հիմքում, ի դեպ, կարող են ընկած լինել տարբեր կարգի ու բնույթի հատկանիշներ՝ առարկայի գույնը, ձևը կամ նրա մի մասը, նյութը, որից պատրաստված է առարկան, գործողությունը, որը կատարում է առարկան, գործողության կատարման միջոցը, գործողությունը, որի արդյունքն է առարկան և այլն (տե՛ս նաև՝ 88, 27):

* Նման պայմանականությունը և դրա հետ կապված ցանկացած անվան ընտրությունը, ինչպես իրավացիորեն նշում է մասնագետների մի մասը, չեն բացառում այն, որ անվանակառուցության դեպքում պետք է առաջնորդվել գործնականության և նպատակահարմարության սկզբունքով: Տե՛ս նաև՝ (116, 39):

Անվանակարգման նպատակահարմարությունը, մասնավորապես կողմնորոշությունն ու պատճառաբանվածությունը, հայտնի է, թե որքան կարևոր նշանակություն ունի քիմիկոսների համար Այս իրողությունն իր վառ դրսևորումն ունի, օրինակ, օրգանական միացությունների անունների շրջանում: Քանի որ օրգանական միացությունները բազմազան են, ուստի դրանց անվանումը «այնպես պետք է կազմվի, որպեսզի այն ոչ միայն ցույց տա նյութի կազմության մեջ մտնող ատոմների քանակը, այլև պատկերացում տա մոլեկուլի կառուցվածքի մասին, որպեսզի կարելի լինի հեշտությամբ ու ճշգրիտ գրել կառուցվածքային ֆորմուլը: Այսպես, օրինակ, «տետրամեթիլմեթան» անվանումից հետևում է, որ մենք գործ ունենք այնպիսի նյութի հետ, որը ստացվում է մեթանից՝ ջրածնի շորս ատոմներից յուրաքանչյուրը մեթիլով տեղակայելով» (19, 56):

Առարկաների հատկանիշների նպատակահարմար ընտրությունը կարևոր դեր է խաղում նաև հատուկ անունների՝ մասնավորապես աշխարհագրության անվանակարգային նշանների* կերտման գործում: Նման կարգի անվանումներն ստեղծվում են հասարակական-քաղաքական, տնտեսական, պատմական, մշակութային և այլ պայմանների թելադրանքով: Ուստի իրենց ծագման փուլում տեղանունները ոչ թե պայմանական են, այլ պատճառաբանված են**։ Պատճառաբանվածությունն առանձնապես բարձր աստիճանով է դրսևորվում նոր հատուկ անունների շրջանում:

Գիտության և տեխնիկայի լեզվում, ինչպես հայտնի է, քիչ տարածում չունեն նաև այսպես կոչված աղգանվանային անվանումները՝ ջրույան ջերմություն, վոլտյան աղեղ, դիզելային շարժիչ, բրոունյան շարժում, տորիչելյան դատարկություն, ռենտգենյան ճառագայթ, Պյու-

* Վերոհիշյալ անվանումների պատճառաբանվածության մասին տե՛ս, օրինակ՝ (76, 40—48) (54) (123):

** Ի դեպ, ժամանակակից մարդուն անհասկանալի տեղանունները բնիկների կամ դրանց հայտնի ու դեռևս անհայտ նախնիների անվանումներն են, որոնք նույնպես ըստ ծագման պատահական ու պայմանական չեն: Մասնագետները իրավացիորեն գտնում են, որ անվանելով առարկան, մարդիկ երբեք չեն հնարել անհասկանալի, ոչինչ չնշանակող բառեր, այլ յուրաքանչյուր անվանում կերտել են որոշակի հիմունքով: Առանձին դեպքերում տեղանունների մեջ մատնանշվում են գետերի, լճերի, բնակավայրերի որոշ հատկություններ ու հատկանիշներ (այսպես, օրինակ՝ գետերի հոսանքի բնույթը, ջրի գույնը կամ համբ, շափը, տեղանքը են): Մի այլ դեպքում ցույց է տրվում անվանվող առարկայի հարաբերությունը մարդու նկատմամբ (օրինակ, քաղաքների և գյուղերի անունները) և այլն: Աշխարհագրական անվանումներում արտացոլվում են նաև մարդկանց գաղափարախոսությունը, աշխարհայացքը: Հատկանիշները, որոնց հիման վրա կերտվում են անվանումները, ժամանակի ընթացքում, իհարկե, կարող են փոխվել (համտ. ժամանակակից անվանումների կերտման հիմքում ընկած հատկանիշները հենի հետ):

թագորասի թեռեմ, Նյուտոնի օրեւեմ, Մարկովիկովի կանոն և այլն*։ Մասնագետները գտնում են, որ նման կարգի անվանումներն իրենց բնույթով մոտենում են շեզոք կամ չկողմնորոշող տերմիններին։ Ըստ նրանց, անվանումների այս տեսակը չի առաջացնում ոչ մի կողմնակի պատկերացում և չի արտացոլում տվյալ հասկացութային կապը մյուսների հետ։ Բացի այդ, այնքան էլ դյուրին չի համարվում սրանց յուրացման գործը։ Սակայն ասել, թե նման բնույթի անվանակարգային նշաններն ընդհանրապես զուրկ են ինչ-որ աստիճանի պատճառաբանվածութունից, թվում է, որ ճիշտ չի լինի։

Ազգանվանային անվանումների մեջ, ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, որպես բաղադրիչներ հանդես են գալիս տարբեր կարգի հասկացություններ բնորոշող տերմիններ. այսպես՝ ջերմություն, աղեղ, նառագայք, թեռեմ, օրեւեմ ևն։ Եվ քանի որ նման կարգի անվանումները հիմնականում կերտվում են գիտութային այս կամ այն բնագավառի տերմինների հիման վրա, ուստի կարելի է ասել, որ դրանք զուրկ չեն ինչ-որ աստիճանի պատճառաբանվածութունից։



Համադործածական բառերի պես տերմինների ու անվանակարգային նշանների պատճառաբանվածութունը հիմնականում դրսևորվում է որոշակի լեզուների շրջանակներում**։

Ազգային տերմինները իմաստային կառուցվածքի տեսակետից հասկանալի, հետևապես և պատճառաբանված են, քանի որ դրանք տվյալ

* Գիտութային լեզվում գործառու են ազգանվանային անվանումների այլ տեսակներ ևս. այսպես, ուսմունքների, գիտական ուղղությունների անվանումները՝ մաթեմատիկա, լեզվաբանություն, հնգյալակառուցություն ևն, ֆիզիկական մեծությունների շափման միավորների անունները՝ ամպեր, օհմ, վոլտ, վատ, ջոուլ, կուլոն ևն, ինչպես նաև նման կարգի այլ անվանումներ։

** Հավասարաթեք բառերի պատճառաբանվածութային հարցում, ինչպես հայտնի է, տարբեր լեզուների միջև առկա են զգալի անհամապատասխանություններ, որոնք գերազանցապես պայմանավորված են անվանման դեպքում առարկաների ու երևույթների ոչ միևնույն հատկանիշի (երբեմն էլ մեկից ավելի տարբեր հատկանիշների) ընտրությամբ։ Համբուլտը, որը լեզվաբանների ուշադրութունը հրավիրեց անվան պատճառաբանվածութային վրա (և դրա բնորոշման համար ստեղծեց ներքին ձև տերմինը), շափազանց մեծ նշանակութուն էր տալիս նման կարգի անհամապատասխանություններին՝ դրանք բացատրելով ազգային գաղափարների ոգով՝ որպես յուրաքանչյուր լեզվի ազգային պարիակվածութային ապացույց, որպես լեզվում ազգային ոգու դրսևորման արդյունք։ Բայց և այնպես անվան պատճառաբանվածութային հարցում, յուրաքանչյուր լեզվի ազգային ինքնատիպ գծերի հետ մեկտեղ, լեզուների միջև նկատվում են ոչ քիչ ընդհանրու-

լեզուն կրողների գիտակցութեան մեջ հարաբերակցում են համապատասխան համագործածական բառերի*, ինչպես նաև իրենց հիմքում ընկած գիտական հասկացությունների հետ:

Տերմինների մասնագիտական կողմնորոշման և պատճառաբանվածութեան դրսևորման գործում մեծ դեր են կատարում տվյալ լեզվի բառակազմական, ավելի ճիշտ տերմինակազմական միջոցները:

Ընդհանուր գրական լեզվի, մասնավորապես համագործածական բառապաշարի համեմատութեամբ, գիտութեան լեզվում ու տերմինաբանական համակարգերում բառակազմական միջոցներն ունեն նաև այլ ընդլսթի գործառութուն: Եթե բառակերտման դեպքում կարելի է բավարարվել միայն գոյութուն ունեցող բառակազմական միջոցներից որևէ մեկի գործածութեամբ, ապա տերմինակերտման ժամանակ, դրանից բացի պետք է առաջնորդվել նաև գիտական հասկացությունների բացահայտման և կողմնորոշման շարժանիշներով: Նման կողմնորոշումն, ի դեպ, չի սահմանափակվում միայն գիտական տվյալ հասկացութեան մեկ հատկանիշի ընդգրկմամբ: Այս կապակցութեամբ Ռ. Գ. Պրոտրովսկին գտնում է, որ տերմինի ներքին ձևը լեզվի բառակազմական ձևութեան միջոցով արտացոլում է տեխնիկական տվյալ հասկացութեան և դասակարգողական որոշակի շարքի մյուս անդամների հարաբերութունը (102, 27):

Քննութունը ցույց է տալիս, որ բառակազմական միջոցների ընտրութեան հարցում ինչ-ինչ տարբերութուններ են նկատվում նաև գիտութեան առանձին բնագավառներում: Իսկ բառակազմական միջոցների կապը այս կամ այն բնագավառի հետ կարող է ոչ միայն «ավանդական լինել, այլ նաև՝ տրամաբանորեն հիմնավորված» (52, 11), պատճառաբանված:

Բառակազմական հետևողական կապերի առկայութեան շնորհիվ, ինչպես համագործածական բառերն ընդհանուր գրական լեզվում, այն-

թյուններ: Տարբեր լեզուներում պատճառաբանող հատկանիշների համընկնելու իրողութունը, ինչպես մասնագետներն են գտնում, մի կողմից, պայմանավորված է առարկաների, երևութեաների՝ առաջին իսկ ծանոթութունից աչքի ընկնող հատկանիշների գոյութեամբ, մյուս կողմից՝ մարդկանց հասարակական գործունեութեան ընդհանրութեամբ: Տե՛ս, օրինակ՝ (88, 28—29):

* Այս երևութը Ն. Պ. Ռոմանովան համարում է լեզվական պատճառաբանվածութուն և գտնում է, որ այն կարող է հատուկ լինել միայն տերմիններին, քանի որ լեզվի հարաբերութեամբ տերմինաբանական համակարգերը երկրորդային են: Ըստ նրա՝ նման պատճառաբանվածութեամբ օժտված են ոչ միայն բնիկ, այլ նաև համագործածական փոխառյալ բառերի հիմքի վրա կերտված տերմինները: Իսկ այն տերմինները, որոնք ստեղծվել են օտարլեզվյան բաղադրիչների հիման վրա, չունեն լեզվական պատճառաբանվածութուն: Տե՛ս (107, 22—23):

պես էլ տերմինները գիտութեան այս կամ այն բնագավառի լեզվում կազմում են մի ուրույն շարք: Վ. Ն. Սեմիշևը գտնում է, որ այդ կապի մեջ յուրաքանչյուր տերմին պատճառաբանված է նախորդի և պատճառաբանող՝ հաջորդի նկատմամբ (110, 8):

Տերմինների, ինչպես նաև անվանակարգային նշանների այս կամ այն կառուցով արտահայտվելը (համադրակա՞ն միաբառ, թե՞ վերլուծական՝ բաղադրյալ) նույնպես ունի իր պատճառաբանութունը: Այսպես, քիմիայի անվանակարգային նշանների բարդ և բաղադրյալ լինելը մեծ մասամբ պայմանավորված է տվյալ միացութեան կառուցվածքի բարդութեամբ: Ինչպես հայտնի է, այս բնագավառի «հիմնական միացութունների անունները (ածխաջրածիններ, սպիրտներ, առաջնային ամիններ և այլն) սովորաբար կազմված են մեկ բառից, հիմնական միացութունների ածանցյալները (եթերներ, քլորանհիդրիդներ, ամիդներ և այլն) կազմված են մի քանի բառերից» (19, 664):

Ուսումնասիրութունները ցույց են տալիս, որ նույն կառուցն ունեցող համագործածական բառերն ու գիտական տերմինները հասկացական-կառուցվածքային (բառակազմական) տեսակետից ունեն պատճառաբանվածութեան դրսևորման ընդհանրութուններ: Բայց միևնույն ժամանակ գիտութեան լեզվում ու տերմինաբանական համակարգերում հասկացական-կառուցվածքային պատճառաբանվածութունն* ունի դրսևորման յուրահատկութուններ, որոնք առկա շեն ընդհանուր գրական լեզվում: Ընդ որում, տերմինների կառուցներից յուրաքանչյուրն** օժտված է պատճառաբանվածութեան տարբեր աստիճանով:

Ածանցավոր տերմինները պատճառաբանված են, քանի որ դրանք մեծ մասամբ կերտված են գիտութեան տվյալ բնագավառում եղած տերմինների (ընդ որում, ինչպես արմատականների, այնպես էլ բարդ ու ածանցավորների) հիման վրա: Բացի այդ, այս կառուցներն օժտված են հասկացական-կառուցվածքային՝ առանձին համակարգեր և տերմինաբանական շարքեր կազմելու հատկութեամբ. հանգամանքներ, որոնք, անշուշտ, նպաստում են տերմինաբանական տարբեր համակարգերում պատճառաբանվածութեան քննվող տեսակի դրսևորմանը: Այսպես, քիմիայի անվանակարգային նշաններն, ինչպես հայտնի է, ընդհանուր առմամբ կերտված են ըստ ամբողջական համակարգերի: Օրինակ, Ժնևյան անվանակարգման համաձայն, «նորմալ, այսինքն՝ շճյուղավորված շղթայով սահմանային ածխաջրածիններն ունեն հե-

* Տերմինների կառուցվածքային-իմաստաբանական պատճառաբանվածութեան մասին տե՛ս, օրինակ՝ (111) (128) (129):

** Տերմինակազմութեան և տերմինների տարբեր կառուցների առանձնահատկութունների քննութունը տե՛ս, օրինակ՝ (110) (15, 275—328) (71, 23—37):

տեղալ անունները՝ մեթան, էթան, պրոպան, բութան, պենտան, հեքսան, հեպտան, օկտան, նոնան, դեկան և այլն (ըստ հունական թվական անունների): Այդ ածխաջրածինների բոլոր ածանցյալների անունները կազմվում են միևնույն արմատներից» (19, 57):

Ածանցավոր կառույցները գիտության այս կամ այն բնագավառի լեզվում զրսևորում են մի այնպիսի առանձնահատուկ պատճառաբանվածություն, որն առկա չէ ընդհանուր գրական լեզվում: Նման երևույթն իր վառ դրսևորումն ունի, օրինակ, ժամանակակից լեզվաբանության*, այսպես կոչված, -ույթ-ային տերմինաբանության (эмическая терминология, «eme» family of terms) մեջ: Սա, ինչպես հայտնի է, արտացոլում է լեզվի նկատմամբ երկաստիճան մոտեցումը, որի հիմքում ընկած է լեզվի կառուցվածքային միավորների և նրանց՝ խոսքում որոշակի դրսևորման հակադրությունը (32, 115—117) (33, 131—138): Փաստորեն, -ույթ վերջածանցը ցույց է տալիս լեզվական տարբեր միավորների կառուցվածքային բնույթը: Այսպես, օրինակ՝ հնչույթ, ձևույթ, գրույթ, իմաստույթ, գեհնեղույթ, ձևահեղույթ, շարահուսույթ, ենթահեղույթ և այլն:

Բարդ տերմինները, ի տարբերություն պարզերի և ածանցավորների, կառուցվածքային-հասկացական տեսակետից օժտված են պատճառաբանվածության ավելի բարձր աստիճանով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ բարդ տերմինները** պատճառաբանված են ոչ թե մեկ, այլ երկու կամ ավելի հատկանիշներով:

Տերմինների տարբեր կառույցների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ պատճառաբանվածությունը լրիվ ու ամենահստակ կերպով զրսևորվում է բաղադրյալ տերմինների շրջանում***: Պատճառաբանվածության նման զրսևորումը պայմանավորված է տերմինների բաղադրյալ կառույցների**** մի շարք առանձնահատկություններով: Նախ, տերմինների շրջանում բաղադրյալ կառույցներն են, որ օժտված են բացառիկ համակարգայնությամբ: Երկրորդ, տերմինակազմության

* Լեզվաբանական տերմինաբանության առանձին ենթահամակարգերում, ինչպես հայտնի է, զրսևորվել են պատճառաբանվածության կայուն տեսակներ: Այս մասին տե՛ս օրինակ՝ (118) (119, 108—109) (79) (15, 222—224, 238—239) (71, 9, 13—14):

** Բարդ տերմինների միջև եղած կապերի ու պատճառաբանվածության մի շարք տեսակների մասին տե՛ս (89, 32—34):

*** Դ. Ն. Շմելըր գտնում է, որ բառերի շրջանում պատճառաբանվածությունը զրսևորվում է մասնակիորեն (տվյալ դեպքում այն միշտ էլ իմաստի կախվածություն է այլ իմաստից), իսկ բառերի կապակցության մեջ, որպես կանոն՝ լրիվ կերպով (130, 25):

**** Բաղադրյալ տերմինների ու անվանակարգային նշանների հարացուցային և շարակարգային պատճառաբանվածության մասին տե՛ս (99, 3—8):

կապակցական միջոցի* շնորհիվ է, որ զգալի չափով ընդլայնվում են արդեն իսկ հայտնի նյութի հիման վրա նոր տերմինների կերտման հնարավորությունները: Բացի այդ, բաղադրյալ կառույցներով (ինչպես նաև բարդերով) է, որ հնարավոր է ճշգրիտ կերպով բնորոշել բարդ հասկացությունները և վերջիններիս տարաբնույթ՝ հատկապես սեռատեսակային հարաբերությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատճառաբանվածության դրսևորման աստիճանը կախված է նաև տերմինների բաղադրիչների քանակից**։ Պատճառաբանվածությունը բարձր աստիճանով է դրսևորվում տերմինների մեկից մինչև եռաբաղադրիչ կառույցներում։ Այս առումով ածանցավորներից հետո պատճառաբանվածության ավելի բարձր աստիճանով են օժտված հատկապես բարդ և բաղադրյալ տերմինների երկբաղադրիչ ու եռաբաղադրիչ կառույցները:

Երկբաղադրիչ բաղադրյալ տերմիններն ունեն բարձր աստիճանի պատճառաբանվածություն, քանի որ նրանց մի բաղադրիչն ընդհանուր է որոշ կարգի տերմինների հետ, իսկ մյուսը հասկացությունների համակարգում ծառայում է տարբերիչ հատկանիշների բնութագրմանը:

Բաղադրյալ տերմինների բազմաբաղադրիչ (քառաբաղադրիչ և ավելի) կառույցներում պատճառաբանվածության ճշգրտության աստիճանն, ընդհակառակն, նվազում է: Եվ տերմինի բաղադրիչներն ինչքան ավելանում են, այնքան այդ կարգի կազմությունները զրկվում են բնորոշիչ հատկությունից և վերածվում են սոսկ նկարագրական անվանումների:

Փաստորեն, չափից ավելի մեծածավալ կառույցները ոչ միայն խախտում են խոսքի տնտեսման սկզբունքը, այլ նաև նվազ չափով են դրսևորում պատճառաբանվածության ճշգրտությունը:

Պատճառաբանվածության աստիճանը, ի դեպ, նվազում է նաև բաղադրյալ տերմինների այն կառույցներում, որոնց կազմում կան հապավումներ***, թվականներ, հատուկ անուններ:

* Ի դեպ, լեզվաբանները պատճառաբանվածությանը կարևոր տեղ են հատկացնում նաև կայուն կապակցությունների սահմանադատման դեպքում: Այսպես, դարձվածաբանական միավորների կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը հաճախ կատարվում է պատճառաբանվածության հատկանիշի հիման վրա: Տվյալ դեպքում պատճառաբանվածությունը հասկացվում է որպես կայուն կապակցությունների իմաստի արտածում բառ-բաղադրիչների իմաստից (125, 78—87): Դարձվածաբանական միավորների պատճառաբանվածության մասին տե՛ս, օրինակ՝ (65, 43—45):

** Այս մասին տե՛ս նաև՝ (74, 20):

*** Մասնագիտական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, ըստ որի հապավումների շրջանում պատճառաբանվածությունը դրսևորվում է յուրահատուկ ձևով, այն է՝ հապաված հնչյունային բաղադրության և նշանակվողի միջնորդավորված կա-

Բաղադրյալ տերմինների շրջանում պատճառաբանվածությունն, ինչպես նշվեց, դրսևորվում է նաև հասկացությունների սեռատեսակային հարաբերությունների արտացոլման շնորհիվ: Տվյալ դեպքում պատճառաբանվածության դրսևորման համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ ամբողջ կառույցով և որոշյալ բաղադրիչով բերորոշված հասկացությունը պատկանում է միևնույն դասակարգողական սխեմային:

Որոշիչ բաղադրիչը միշտ էլ արտահայտում է տեսակային դասակարգողական հատկանիշ: Որոշյալ բաղադրիչն էլ կոնկրետանում է որոշիչ բաղադրիչի միջոցով (77, 84):

Բաղադրյալ տերմինները, փաստորեն, կերտված են սեռային հասկացության հետևողական սահմանափակմամբ: Այսինքն, այս կառույցներում յուրաքանչյուր նոր բաղադրիչ ընդհանուր առմամբ արտահայտում է տեսակային հասկացության գաղափար: Հասկացական-կառուցվածքային պատճառաբանվածությունը դրսևորվում է այն բանի շնորհիվ, որ սեռային հասկացությանը ավելացնելով մի ինչ-որ որոշիչ, արդյունքում ունենում ենք նոր հասկացություն բնորոշող տերմին, որը միացնում է այդ երկու կարգի հասկացությունների բովանդակության մեջ մտնող հատկանիշները: Սեռային հասկացությանը կցելով ևս մի նոր որոշիչ, դրանով իսկ ավելացնում ենք տերմինի հիմքում ընկած ամբողջ հասկացության բովանդակությունը կազմող հատկանիշների քանակը:

Հայտնի է, որ տերմինների ածանցավոր, բարդ և բաղադրյալ կառույցները մեծ չափով նպաստում են այս կամ այն բնագավառում տերմինաբանական տարբեր կարգի շարքեր կազմելուն*: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտության լեզվում տերմինների հասկացական-կառուցվածքային պատճառաբանվածությունն ավելի ցայտուն է դրսևորվում տերմինաբանական շարքերում (հատկապես, եթե դրանք կազմված են բարդ ու բաղադրյալ կառույցների միջոցով):

Պատճառաբանվածությունը դրսևորվում է այն բանի շնորհիվ, որ այս կամ այն համակարգում (ինչպես նաև ենթահամակարգում, մի առանձին խմբում) տերմիններից յուրաքանչյուրն ունի մի ընդհանուր բաղադրիչ, որը և հանդես է գալիս իբրև որոշակի շարքի ցուցիչ:

պով, ինչպես նաև հնչյունային այդ բաղադրության և հնչյունային լրիվ բաղադրության կապով: Հապավումները կարող են ունենալ պատճառաբանվածության սովորական հատկանիշ, որի մեջ իր արտահայտությունն է գտնում հնչյունային տարբեր բաղադրությունների միջև եղած կապը, բայց միայն երկակի միջնորդավորման, այսինքն՝ հնչյունային լրիվ բաղադրության պատճառաբանվածության հիման վրա: Այս մասին տե՛ս (60, 35—39):

* Տերմինաբանական տարբեր շարքերի և դրանց առանձնահատկությունների մասին տե՛ս (15, 315—319):

Մասնագետները, սովորաբար, ածանցավոր և բարդ (ինչպես նաև բաղադրյալ) բառերը համարում են պատճառաբանված, իսկ բոլոր արմատականները՝ չպատճառաբանված: Սկզբից ևեթ նշենք, որ ճիշտ չէր լինի այս տեսակետը անվերապահորեն տարածել նաև տերմինների վրա (ինչպես դա հաճախ է կատարվում), քանի որ այն կարող է հանգեցնել էական հակասությունների:

Ի տարբերություն արմատական (չածանցված) բառ-ոչ տերմինների, որոնք ներկայումս ընդհանուր գրական լեզվում կորցրել են իրենց երբեմնի պատճառաբանվածությունը, քանի որ դրանք հնարավոր չէ հակադրել լեզվական որևէ նշանի, արմատական տերմինները գիտություն որոշակի բնագավառի լեզվում ձեռք են բերում այս կամ այն աստիճանի պատճառաբանվածություն՝ համապատասխան արմատական բառերին հակադրվելու շնորհիվ (118) (110) (115, 26—37): Նման երեվույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտության լեզվում արմատական բառերը, որպես կանոն, հանդես են գալիս ոչ թե իրենց սովորական իմաստով, այլ գործածվելուց առաջ ենթարկվում են իմաստային մասնագիտացման: Այս առումով ինչ-որ աստիճանի պատճառաբանվածություն ունեն, օրինակ՝ արմատ, հիմք, տուն և նման կարգի այլ արմատական տերմինները, քանի որ դրանք համապատասխան համագործածական արմատական բառերի իմաստի մասնագիտացման արդյունք են: Տվյալ դեպքում պարտադիր չէ, որ պատճառաբանված տերմինն ունենա հասկացության ամբողջ բովանդակությունն ընդգրկող հատկանիշներ:

Փաստորեն, պատճառաբանվածությունը գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում դրսևորվում է ոչ միայն ածանցման, բառերի բարդության և կապակցության միջոցով, այլ նաև՝ արմատական բառերի ու արմատական տերմինների հակադրությամբ:

Տերմինների պատճառաբանվածության դրսևորումները, ինչպես տեսանք, չեն սահմանափակվում զուտ բառակազմական առումով: Այսինքն, պատճառաբանվածությունը, իրականում, իր բնույթով սոսկ ձևական չէ: Եվ իրոք, ի՞նչ կարող է տալ մեզ այն բանի իմացումը, թե այսինչ տերմինը կազմված է այնինչ տերմինից: Հասկանալի է, որ, ըստ էության, առանձնապես՝ ոչինչ:

Քանի որ տերմինները չեն ստեղծվում կամայականորեն, ուստի նրանց կառուցվածքը միշտ էլ յուրովի իմաստավորված է, ուրեմն և այս կամ այն աստիճանով էլ պատճառաբանված է:

Այսբանից հետևում է, որ տերմինի պատճառաբանվածությունը պետք է դիտել լայն առումով, այսինքն, իբրև բացատրություն այն բանի, թե ինչո՞ւ, ինչի՞ հիման վրա է ընդունված տերմինի այս կամ այն

ձևը: Իսկ նման հիմնավորում, թվում է, որ միշտ էլ կարելի է գտնել: Այս կապակցությունը մասնագետների մի մասը այն կարծիքն է զարգացնում, ըստ որի պատճառաբանվածությունը հարկավոր է հասկանալ որպես տերմինի կառուցվածքի ցանկացած կապը իմաստի հետ՝ ինչ ձևով էլ որ միջնորդավորված և վերաիմաստավորված լինի այն (104, 94):

Այսպիսով, ուսումնասիրությունները հանգեցնում են այն եզրակացության, որ գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածության բոլոր կարգի դրսևորումներն ընդհանուր առմամբ ունեն գիտակցված և տրամաբանորեն հիմնավորված բնույթ: Իսկ գիտակցված պատճառաբանվածությունն էլ, կարելի է ասել, որ տերմինների համար ունի առանձնահատուկ նշանակություն. այն, փաստորեն, գիտական անվանումների բնորոշ հատկություններից մեկն է:



Ժամանակի ընթացքում տերմինները, իհարկե, կարող են կորցնել իրենց պարտադիր պատճառաբանվածությունը*: Դա հիմնականում տեղի է ունենում տերմինների հիմքում ընկած հասկացությունների բովանդակության զարգացման պատճառով: Նման դեպքերում աստիճանաբար անհետանում են տերմինաբանական և ոչ տերմինաբանական բառապաշարի համապատասխան բառերի միջև եղած այն ընդհանրությունները, որոնց հիման վրա բնորոշված գիտական հասկացությունները ստացել էին պատճառաբանված անվանումներ: Եվ տերմինների բառացի ու ժամանակակից իմաստների հարաբերությունը հետզհետե դառնում է ավելի ու ավելի պայմանական:

Հայտնի է, որ դեռևս ձևավորման մեջ գտնվող գիտական հասկացությունների բովանդակությունը ճշգրիտ ու հստակ կերպով հաստատ-

* Մասնագետները գտնում են, որ գոյություն ունեն անվան պատճառաբանվածության կորստի տարբեր աստիճաններ (88, 33): Առաջին աստիճանն այն է, երբ բառը ձևով է բերում պատճառաբանվածությանը չհամապատասխանող կամ երբեմն էլ հակասող իմաստ: Նման իրողությունը վկայում է այն մասին, որ տվյալ բառի ներքին ձևը ինչ-որ աստիճանով մոռացվում է խոսողների կողմից: Պատճառաբանվածության մոռացության երկրորդ աստիճանն այն է, երբ պատճառաբանող հատկանիշը կամ անվանման կառուցվածքը հաղիվ են կռահվում: Անվանման կառուցվածքը մթազնվում է, չնայած այն հանգամանքին, որ պատճառաբանող մեկ հատկանիշը մնում է հստակ, այսինքն, տվյալ դեպքում, ներքին ձևը մասնակիորեն է պահպանվում: Բառի պատճառաբանվածության մոռացության երրորդ աստիճանը նրա լրիվ կորուստն է (88, 33—34):

ված չի լինում, վերջնականապես որոշված չեն լինում նրա ընդգրկման սահմանները: Այս դեպքում այն հատկանիշները, որոնք համարվում էին անհրաժեշտ ու բավարար, ժամանակի ընթացքում կարող են դառնալ երկրորդական ու ոչ բավարար, իսկ համապատասխան հասկացութայինը տրված պատճառաբանված անվանումն էլ՝ պայմանական: Այսինքն, եթե տերմինի ներքին ձևը նշում է այնպիսի հատկանիշներ, որոնք անհամատեղելի են իր ժամանակակից իմաստին և որոնք հակասում են օբյեկտի էությունը, ապա նման տերմինն իր բնույթով ճիշտ կողմնորոշող չէ (86, 24—27) (38, 65) (110, 9) կամ էլ ճիշտ բնորոշում չունի (15, 252—256), օրինակ՝ առում, քերմոդիկամիկա ևն:

Ուստի բնական է, որ գիտության տարբեր բնագավառների զարգացման ամեն մի շրջանում էլ կարող են տեղ գտնել պատճառաբանվածությունից զրկված տերմիններ:

Փաստորեն, իմաստաբանական տեսակետից տվյալ շրջանում պատճառաբանվածությունից զրկված է այն տերմինը, որի ներքին ձևը չի համապատասխանում իր բովանդակությանը և այն մատնանշում է հասկացության ոչ բնորոշ ու ոչ բավարար հատկանիշները կամ էլ ընդհանրապես չի մատնանշում հասկացության բովանդակությունը: Պատճառաբանվածությունից զրկված են նաև այն տերմինները, որոնք չունեն ներքին ձև*։ Այս առումով, ինչպես մեկ առիթով նշվեց, պատճառաբանված չեն հատկապես օտար լեզուներից փոխառված տերմինները:

Մասնագետների շրջանում երբեմն այսպիսի հարց է ծագում, թե պատճառաբանվածությունից զրկված տերմինները գիտության այս կամ այն բնագավառի զարգացման որոշակի փուլում արդյոք քանակական ի՞նչ հարաբերության մեջ են պատճառաբանվածների համեմատությամբ: Ըստ նրանց, եթե առաջինները գերակշռում են, ապա պատճառաբանվածությունը այնքան էլ բնորոշ չէ տերմիններին: Այս կապակցությամբ ասենք, որ, նախ շատ դժվար է որոշել, թե գիտության որոշակի բնագավառում ո՞ր կարգի տերմիններն են մեծ թիվ կազմում (կամ գոնե նման հարցադրումը պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն): Եվ երկրորդ, որն ավելի կարևոր է, միավորների սոսկ քանակական կազմով, հասկանալի է, որ հնարավոր չէ ժխտել կամ հաստատել այս կամ այն իրողությունը:

Տվյալ դեպքում, թվում է, որ անհրաժեշտ է պարզել մի այլ կարևոր հարց. այն է, թե ներկայումս ի՞նչ կարգի տերմիններն են, որ պատ-

* Մ. Գ. Բերգերը գտնում է, որ իրականում ամեն մի մարդու համար «չկողմնորոշող» (չպատճառաբանված) կարող են լինել ոչ միայն ներքին ձևից զրկված տերմինները, այլև այն տերմինները, որոնց ներքին ձևը հայտնի չէ տվյալ անձնավորությանը (38, 65):

ճառաբանված շնն: Քննութիւնը ցույց է տալիս, որ ներկա շրջանում ընդհանուր առմամբ պատճառաբանված շնն (կամ ավելի ճիշտ, իրենց երբեմնի պարտադիր պատճառաբանվածութիւնից զրկվել են) գիտութիւնն այս կամ այն բնագավառի ավանդական տերմինները: Չնայած այն հանգամանքին, որ հիշյալ տերմինները ներկայումս ինչ-որ ձևով հակադրվում են լեզվի համապատասխան համադրածական բառերին, բայց, այնուամենայնիվ, այժմ դրանք հասկացութիւնների բովանդակութիւն զարգացման պատճառով, մեծ մասամբ վերածվել են պայմանական անվանումների, այսինքն, կորցրել են իրենց երբեմնի այս կամ այն բնութի պատճառաբանվածութիւնը: Այսպես, հայտնի է, որ ժամանակակից լեզվի տեսանկյունից շատ դեպքերում «արավոր չէ կամ դժվար է վերհանել այն հատկանիշները, որոնց հիման վրա կերտվել են մեզ ավանդված տերմինները: Թեև նման տերմինների պատճառաբանվածութիւնը հստակ չէ, բայց պատմահամեմատական վերլուծութիւնը հնարավորութիւն է տալիս բացահայտելու այն: Փաստորեն, ներկայումս մեզ համար չպատճառաբանված թվացող բառերն ու տերմիններն իրենց պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերում պատճառաբանվածութիւն:

Չնայած որ տերմինների մի մասի պատճառաբանվածութիւնը դժվար է վերականգնել, իսկ շատ դեպքերում էլ այն կարող է լինել վիճելի, բայց նման հանգամանքներն ամենևին էլ չեն հակասում տերմինների՝ իրենց կերտման պահին պատճառաբանված լինելու իրողութիւնը (տե՛ս նաև՝ 88, 26—27): Այս կապակցութեամբ Ա. Ի. Մոխսեւը իրավացիորեն առարկում է Ն. Ն. Ամոսովայի՝ չափազանցութիւն հասցված այն տեսակետին, ըստ որի ընդհանրապես առարկայի անվանումը ինչպե՛ս լեզվում ի հայտ գալու պահին, այնպե՛ս էլ հետագա գործածութիւն ընթացքում կարող է իր մեջ շունենալ անվանվող առարկայի այս կամ այն հատկանիշի արտացոլում (28, 25) (92, 124—126): Հասկանալի է, որ պատճառաբանվածութիւնից զրկված կամ փոխառյալ բառերն ու տերմիններն անգամ չեն կարող հաստատել այս տեսակետը, քանի որ առաջինները ծագման պահին, անկասկած, եղել են պատճառաբանված, իսկ երկրորդ կարգի միավորներն ընդհանրապես կապ չունեն բառերի ու տերմինների կերտման գործընթացի հետ, դրանք, ինչպես հայտնի է, յուրացման և ոչ թե նոր անվանումների ստեղծման արդյունք են (հմմտ. 92, 124—126):

Ավանդական տերմինների պատճառաբանվածութիւն-չպատճառաբանվածութիւն մասին խոսելիս, ինչպես նշվեց, դեռևս բավարար չէ ելնել միայն ժամանակակից լեզվի տեսանկյունից: Բացի այդ, սովյալ դեպքում չպետք է ելնել տերմինների հիմքում ընկած հասկացութիւն-

ների ներկայիս ըմբռնումից, ինչպես նաև գիտության այս կամ այն բնագավառի զարգացման արդի մակարդակից: Առավել ևս չի կարելի հիմնվել միայն անվանումների ոչ տերմինաբանական նշանակութային վրա, քանի որ նման դեպքում հնարավոր է պարզել տերմինների հիմքում ընկած հասկացությունների ինչ-որ մի կողմը, այն էլ՝ ոչ էականը:

Այլանդական տերմինների պատճառաբանվածութային կամ չբացատրանալիս պատճառաբանվածութային մասին ճիշտ պատկերացում կազմելու համար նպատակահարմար է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. նախ, թե այս կամ այն տերմինը ե՞րբ (լեզվի զարգացման ո՞ր փուլում) և գիտական ո՞ր տեսության կամ ուսմունքի կողմից է ստեղծվել և, համապատասխանաբար, ի՞նչ կերպ է ըմբռնվել դրա հիմքում ընկած հասկացությունը՝ գիտության տվյալ բնագավառի զարգացման այդ շրջանում:

Ելնելով հիշյալ սկզբունքներից, կարելի է ասել, որ ներկայումս մեզ համար շատաճառաբանված տերմինները նախապես (գիտության այս կամ այն բնագավառում առաջին անգամ երևան գալու ժամանակ) ունեցել են ինչ-ինչ բնույթի ու աստիճանի պատճառաբանվածություն, քանի որ դրանք, անկասկած, արտացոլել են իրակությունների ու երկվությունների՝ գիտության տվյալ բնագավառի զարգացման համապատասխան շրջանին բնորոշ ըմբռնումները: Այսպես, հունական քերականությունից ժառանգված և ժամանակակից լեզվաբանության մեջ ամրակայված տերմինները նախապես պատճառաբանված են եղել, քանի որ դրանք արտացոլել են լեզվական իրակությունների՝ այն ժամանակաշրջանի քերականության զարգացմանը բնորոշ ըմբռնումները: Ասվածը կարելի է հիմնավորել ներկայումս պատճառաբանվածությունից զրկված դերանուն տերմինի օրինակի հիման վրա: Ասել, թե նախապես այն լրիվ պայմանական է եղել, ճիշտ չի լինի: Չէ՞ որ այս տերմինն իր մեջ արտացոլել է դերանվան՝ որպես մի առանձին խոսքի մասի նախնական ըմբռնումը, ըստ որի դերանունը դրվում է անվան փոխարեն: Այլ բան է, որ այդ տերմինի հիմքում ընկած հասկացության այժմյան ըմբռնումը լիակատար չափով չի համապատասխանում այն նշանակությանը, որ նա ունի քերականության մեջ: Նույնը կարելի է ասել ենթակա տերմինի մասին, որը ներկայումս չի համապատասխանում գործողություն կատարող առարկայի մասին մեր ունեցած ըմբռնմանը:

Հետևաբար, ինչպիսին էլ որ լինեն բառերի կամ տերմինների իրական իմաստը և պատմական զարգացման անցած ուղին, դրանց առաջացման ու կերտման, ինչ-որ չափով նաև իմաստի հետագա զարգացման գործում միշտ էլ կարևոր նշանակություն է ունենում պատճառաբանվածությունը՝ թեկուզ ոչ լրիվ՝ մասնավոր դրսևորմամբ: Եթե առանց պատճառաբանվածության տերմիններն ինչ-որ կերպ կարող են գործա-

ուել, ապա առանց նման հիմունքի նրանք գործնականորեն չեն կարող
ծագել (տե՛ս նաև՝ 92, 129):

Այժմ տեսնենք, թե ո՞ր տերմիններն են օժտված դրական հատկու-
թյուններով, հետևապես և որո՞նք են ավելի նախընտրելի՝ պատճառա-
բանվածնե՞րը, թե՞ չպատճառաբանվածները: Այս հարցի կապակցու-
թյամբ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են միան-
դամայն տարբեր և երբեմն էլ հակադիր կարծիքներ:

Պատճառաբանվածությունը որպես դրական երևույթ չընդունող
մասնագետները (Պ. Իվիչ, Ա. Վ. Իսաչենկո և ուրիշներ) գտնում են, որ
խմաստաբանորեն հստակ տերմինները կարող են առաջացնել միակող-
մանի, գուցե և ոչ ճիշտ պատկերացում տվյալ հասկացության բովան-
դակության մասին (68, 21) (69, 19—25) (87, 15—16)*:

Հավանություն չտալով պատճառաբանված տերմիններին (կողմնո-
րոշողներին ընդհանրապես և ճիշտ կողմնորոշողներին մասնավորա-
պես), մասնագետների մի մասը, փաստորեն, առաջ է քաշում այն տե-
սակետը, ըստ որի՝ որքան տերմինի ներքին ձևը մոտ է իր ժամանա-
կակից (իրական) իմաստին, այնքան ավելի մեծ է այն բանի հավա-
նականությունը, որ դրանք կարող են շփոթվել (112, 15): Սակայն, ինչ-
պես այս կապակցությամբ Մ. Գ. Բերգերն է իրավացիորեն գտնում,
տերմինի ժամանակակից իմաստի և ներքին ձևի շփոթումը, որպես կա-
նոն, պայմանավորված է ոչ թե նրանց միջև եղած այս կամ այն հա-
րաբերակցությամբ (չնայած որ այդ գործոնը, իհարկե, ինչ-որ չափով
կարող է դեր խաղալ), այլ՝ գլխավորապես տերմինի ժամանակակից
իմաստի շիմացությամբ (38, 67):

Տերմինի բովանդակության և ներքին ձևի միջև կապի բացակայու-
թյունը, հիշյալ մասնագետների կարծիքով, թույլ է տալիս խուսափել
այն հակասությունից, որը հաճախ դրսևորվում է տերմինի բովանդա-
կության փոփոխության դեպքում: Ըստ նրանց, չպատճառաբանված
տերմիններից օգտվելիս անհրաժեշտություն չի առաջանում դրանք փո-

* Մասնագետների մի մասը գտնում է, որ թերություններից զերծ չեն հատկապես
պատճառաբանված այն տերմինները, որոնք կերտվել են համագործածական բաների
իմաստի հիմքի վրա: Ըստ նրանց, նման տերմիններն սկզբնական շրջանում զուրկ են
լինում հատկությունից, քանի որ գիտական համապատասխան հասկացությունները
ձևավորվում են աստիճանաբար: Բացի այդ, լեզվի համագործածական բաների մեծ
մասի բազմիմաստությունն իր հերթին բազմիմաստություն է առաջացնում նաև համա-
պատասխան տերմինների շրջանում: Տե՛ս, օրինակ՝ (107, 19—20):

խարինել ուրիշներով: Նման դեպքերում բավական է արձանագրել տերմինների բովանդակության մեջ առաջ եկած փոփոխությունները (68, 21) (69, 19—25):

Ըստ երևույթին, պատճառաբանված տերմինների (սրանց մեջ հատկապես ճիշտ կողմնորոշողների) դեմ էական առարկությունն այն է, որ գիտության զարգացման, տերմինների իմաստների փոփոխության հետ մեկտեղ, ներքին ձևը երբեմն կարող է հակասության մեջ մտնել նոր՝ իրական իմաստի հետ: Նման դեպքերում, իրոք, անհրաժեշտություն է առաջանում այս կամ այն տերմինը փոխարինել մեկ ուրիշով՝ պատճառաբանվածով և ընդ որում՝ ճիշտ կողմնորոշում ունեցողով: Փոխարինումն առավել անհրաժեշտ է դառնում, որքան ավելի է զգացվում տերմինի ոչ ճիշտ կողմնորոշությունը: Մ. Գ. Բերգերը, նման երևույթը լրիվ բնական ու օրինաչափ համարելով, գտնում է, որ եթե հաստատվում է հասկացության կեղծությունը, ապա այն կարող է անհետանալ: Հասկացության հետ միասին գործածությունից դուրս է գալիս նաև այն բնորոշող տերմինը: Եվ, ըստ էության, նոր հասկացության երևան գալն ուղեկցվում է նոր տերմինի առաջացմամբ: Իսկ հասկացությունները, սովորաբար, գիտության զարգացման հետ մեկտեղ ճշգրտվում են, և, այսպիսով, դրանք բնորոշող տերմինները ոչ թե վերածվում են կեղծ կողմնորոշողների, այլ շարունակում են բավարարել տվյալ բեռնագավառի պահանջները (38, 67):

Նկատի ունենալով պատճառաբանված տերմինների մի շարք առավելությունները, նախապատվությունը տալիս ենք այն մասնագետների (Գ. Ս. Լոտտե, Մ. Գ. Բերգեր, Կ. Ա. Լեկովսկայա, Վ. Ն. Սեմիլև, Վ. Պ. Գանիլենկո և ուրիշներ) տեսակետին, ովքեր գիտական տերմինների համար կարևոր են համարում կողմնորոշության և, մասնավորապես, ճշգրիտ կողմնորոշության հատկությունը*:

Պատճառաբանվածությունն, ինչպես հայտնի է, ինչ-որ շահով պատկերացում է տալիս այն մասին, թե ինչու տվյալ առարկան կամ երևույթը անվանված է այսպես և ոչ թե այլ կերպ և մասամբ էլ՝ ինչու՞ տվյալ բառը կամ տերմինն ունի այսպիսի և ոչ թե՝ այլ իմաստ**:

Պատճառաբանված տերմինների՝ գլխավորապես ազգային ձև ունենալու իրողությունը (մայրենի լեզվի ներքին միջոցներով կերտված լինելը) ինքնին վկայում է դրանց առավելության մասին՝ ընդհանրա-

* Պաշտպանելով վերոհիշյալ տեսակետը, միևնույն ժամանակ շեք անտեսում պատճառաբանված տերմինների որոշ թերի կողմերը և քննադատական մոտեցում ենք ցուցաբերում դրանց նկատմամբ:

** Հասկանալի է, որ առանձին դեպքերում երբեմն դժվար է լինում որոշել, թե ինչու է ընտրված բառի իմաստի պատճառաբանվածության այս կամ այն միջոցը:

պէս տվյալ գրական լեզուն և մասնավորապէս գիտութեան համապատասխան բնագավառի բառապաշարը հարստացնելու առումով*:

Պատճառաբանված տերմիններն, ի դեպ, անհրաժեշտ են ոչ այնքան գիտութեան արտաքին կապերի, որքան ներգիտական ոլորտի համար: Գիտութեան այս կամ այն բնագավառում տերմիններն, ինչպէս հայտնի է, ընդհանուր առմամբ ավելի հեշտ ըմբռնվում և յուրացվում են իրենց մեկնաբանի ձեռքով (35, 99)**:

Իհարկէ, ներքին ձևը երբեմն ինչ-որ շփոթ կարող է արգելք դառնալ տերմինի իրական իմաստը հասկանալու գործում: Սակայն տերմինի ներքին ձևի կենդանի զգացողութունը մեծ մասամբ նպաստում է նրա իմաստի հասկանալուն և դրանով իսկ ավելի դյուրին դարձնում գիտական հաղորդակցութունը***:

Պատճառաբանված տերմիններն ավելի նախընտրելի են, քանի որ պարզ մեծ մասամբ օժտված են մասնագիտական կողմնորոշմամբ, ինչպէս նաև՝ գիտական համապատասխան հասկացութեան բովանդակութունը բացահայտելու հատկութեամբ (86, 55) (81, 108):

Ակնհուռ է տրամաբանական բարձր աստիճանի պատճառաբանվածութուն ունեցող տերմինների կապը գիտութեան այս կամ այն բնագավառի որոշակի տեսութունների և ուսմունքների հետ: Դրանք գիտական հաղորդակցութեան մասնակիցներին, կողմնորոշելով դեպի համապատասխան տեսութունները, ինչ-որ աստիճանի պատկերացում են տալիս դրանց մասին:

* Որոշ լեզվաբաններ գտնում են, որ սաղաթին տերմինները պատճառաբանվածութեան դրական հատկութեան հետ մեկտեղ ունեն նաև որոշ թերի կողմեր: Ըստ նրանց, նման տերմինների իմաստը, ղուգորդվելով համագործածական բառերի իմաստի հետ, կորցնում է ճշգրտութունը, որի պատճառով էլ խախտվում են համապատասխան գիտական հասկացութեան սահմանները: Տե՛ս, օրինակ՝ (107, 19—20):

** Տերմինների դյուրին ըմբռնվելու և հիշվելու հատկութունը, որն ընդհանուր առմամբ բնորոշ է պատճառաբանվածներին, հասկանալի է, որ կարևոր նշանակութուն ունի հատկապէս ուսուցողական նպատակների և հանրութեան լայն շրջաններում գիտելիքների տարածման համար:

*** Կարևորութուն տալով պատճառաբանված տերմիններին նման հատկութեանը, միևնույն ժամանակ շնք բացարձականացնում այն: Այսպէս, պարտադիր չէ, որ պատճառաբանված տերմինները (հատկապէս գիտութեան մի շարք ճյուղերի) ընդհանրապէս հասկանալի լինեն բոլորին, այն էլ առանց նախապէս մասնագիտական պատրաստվածութուն ունեցող անձանց, քանի որ ներկա շրջանում գիտութեան տարբեր բնագավառների զարգացման հետ մեկտեղ ստեղծվում են ավելի բարդ հասկացութուններ, որոնք բնութագրվում են տարբեր հատկանիշներով կամ որոնք ենթադրում են տրամաբանական մի շարք գործողութուններ: Այս կապակցութեամբ Պ. Իվիչն իրավացիորեն գտնում է, որ նման հասկացութուններ բնորոշող տերմինների յուրացման համար անհրաժեշտ է ըմբռնել համապատասխան գիտական տեսութունն ամբողջութեամբ և իմանալ տվյալ տերմինի հետ տերմինաբանական համակարգ կազմող մյուս տերմինները (68, 21—22):

Տրամաբանորեն հիմնավորված և պատճառաբանված տերմիններն ընդհանուր առմամբ օժտված են բնորոշիչ-սահմանողական գործառու-թյամբ (իհարկե, տվյալ դեպքում շինք անտեսում նաև մի շարք բը-նագավառների տերմինների անվանողական և այլ գործառությունները): Փաստորեն, պատճառաբանված և ճիշտ կողմնորոշող շատ տերմիններ միաժամանակ հանդես են գալիս որպես իրենց հիմքում ընկած համա-պատասխան հասկացությունների առավելագույն հակիրճ սահմանում-ներ (տե՛ս նաև՝ 38, 66—67):

Պատճառաբանված տերմինների մեջ, ինչպես հայտնի է, ըստ հը-նարավորին լրիվ են արտացոլված գիտական համապատասխան հաս-կացությունների էական հատկանիշները. հանգամանք, որը մեծ շա-փով ապահովում է գիտական հաղորդակցությունների ճշգրտությունը և հասկանալիությունը:

Պատճառաբանված տերմինը ոչ միայն բնորոշում է իր հիմքում ըն-կած հասկացությունը, այլև իմաստավորում է այդ հասկացության և տվյալ համակարգի մյուս հասկացությունների հարաբերությունները (տե՛ս նաև՝ 93, 60): Փաստորեն, նման կարգի տերմինները որոշակի համակարգի շրջանակներում հանդես են գալիս որպես հասկացություն-ների տեղն ու հարաբերությունները մատնանշող լեզվական նշաններ: Բացի այդ, պատճառաբանված տերմիններն, իրենց բառակազմական որոշակի կապերի առկայության շնորհիվ, ապահովում են տերմինա-բանությանն առաջադրվող պահանջներից մեկը՝ կառուցվածքային հա-մակարգայնությունը:

Հայտնի է, որ գիտության տարբեր բնագավառների տերմինաբա-նությունն ունի իր առանձնահատուկ գծերը: Այս կապակցությամբ Կ. Ա. Լեկովսկայան իրավացիորեն գտնում է, որ եթե տեխնիկայում (կամ մասնագիտական այլ նեղ բնագավառներում) հնարավոր է և պետք է նախապատվությունը տրվի անվանակարգային նշանակումներին (որոշ դեպքերում էլ պայմանական, ամեն կարգի՝ պատճառաբանվածությունից զուրկ անվանումներին), ապա զաղափարախոսության հետ անմիջակա-նորեն կապված հասարակական-քաղաքական գիտությունների համար խիստ անհրաժեշտ և անխուսափելի են տերմին-բնորոշումները, քանի որ քաղաքական լուսավորությունը ժողովրդական զանգվածների լայն շրջանում գիտակցականության զարգացման անհրաժեշտ նախադրյալ-ներ է ստեղծում (81, 203):

Գիտության լեզվում նախապատվությունը տալով պատճառաբան-ված տերմիններին, միևնույն ժամանակ, շինք գերազնահատում պատ-ճառաբանվածության առավելությունները: Այսպես, հայտնի է, որ տեր-մինավորման հիմքում առանձին դեպքերում ընտրված է լինում ան-
238

վանվող առարկայի (կամ երևույթի) արտաքին մի ինչ-որ հատկանիշ և երբեմն էլ ոչ ամենից էականը, շնայած որ այն նույնպես կարող է առաջացնել իմաստային որոշակի զուգորդություն (61, 64): Նման պայմաններում տերմինավորման պատճառաբանվածությունը ոչ միշտ է արտացոլում հասկացության տրամաբանական կառուցվածքը: Որոշ դեպքերում էլ պատճառաբանված տերմիններն օժտված չեն լինում հասկացության բովանդակության բացահայտման գործառութայամբ:

Այսպիսով, տերմինների կերտման դեպքում, թվում է, որ չի կարելի առաջնորդվել միայն բառակազմական կաղապարների կենսունակությամբ ու կանոնավորվածությամբ: Ցանկալի է, որ տերմինները, առանձնապես նորակազմները, իմաստավորված և պատճառաբանված լինեն թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստաբանական տեսակետից: Այսինքն, տերմինները պետք է լինեն ոչ թե սովորական անվանումներ կամ պարզապես պայմանական նշաններ, այլ նրանք պետք է օժտված լինեն համապատասխան առարկաների մասին ուղղակի և ճշգրիտ պատկերացում տալու հատկությամբ (տե՛ս նաև՝ 97, 281):

Հայտնի է, որ գիտության տարբեր բնագավառների ժամանակակից տերմինների ստեղծման գործում առավել հստակ ձևով է դրսևորվում գիտակցականության գործոնը: Դրա շնորհիվ էլ ներկայումս ավելի շատ հնարավորություններ կան տերմինները, տերմինների ամբողջական համակարգերը կերտել ու գիտական շրջանառության մեջ դնել ճշգրիտ հիմունքներով ու դասակարգողական որոշակի հատկանիշներով, ընդ որում տրամաբանորեն հիմնավորված և պատճառաբանված կերպով:

Ժամանակակից գիտական գրականության մեջ, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, ակնառու է դրսևորվում տերմինավորման պատճառաբանվածությունը պահպանելու և հաստատելու միտումը:

Այս կապակցությամբ անհրաժեշտություն է զգացվում պարզել գործնական արժեք ունեցող հետևյալ էական հարցը՝ որո՞նք են տերմինների՝ պատճառաբանված ձևով կերտելու և ներկայացնելու ուղիներն ու միջոցները:

Պատճառաբանվածության տարբեր կարգի դրսևորումների քննությունից հետևում է, որ գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում տերմինների պատճառաբանվածությունն իրականացնելու և ապահովելու համար անհրաժեշտ է նախապես՝ տերմինների կերտման ժամանակ հաշվի առնել մի շարք կարևոր նախապայմաններ:

Գիտական շրջանառության մեջ գործադրվող տերմինները ցանկալի է, որ ունենան մասնագիտական կողմնորոշման բնույթ, այսինքն, լավ կլինի, որ դրանք օժտված լինեն համապատասխան երևույթների ու իրակությունների մասին ճիշտ պատկերացում տալու հատկությամբ:

Գիտության տարբեր բնագավառներում, հատկապես տեխնիկայի ու արտադրական գործունեության ոլորտում, անվանակարգումը ցանկալի է, որ ընդհանուր առմամբ կատարվի նպատակահարմարության սկզբունքով: Այսինքն, լավ կլինի, որ անվանման՝ անվանակոչության առարկայի հետ ունեցած կապը որքան հնարավոր է լինի հստակ ու շոշափելի: Այս պայմանի խախտումը կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Նման դեպքում հնարավոր է, որ անվանումը ապակողմնորոշի և կասկածների տեղիք տա և, բնականաբար, շարունակի ճշգրիտ ու անհրաժեշտ ինֆորմացիա (տե՛ս նաև՝ 116, 40):

Տերմինների ճշգրտության ապահովման, մասնավորապես, նրա՞նք պատճառաբանվածության դրսևորման գործում կարևոր նշանակություն ունի համապատասխան հասկացությունների բացահայտումը՝ բնորոշումը: Առանց հասկացության բովանդակության բնորոշման, առանց այն հատկանիշների առանձնացման, որոնք պետք է, որ սահմանադատեն սովյալ հասկացությունը մյուսներից, ինչպես Վ. Պ. Դանիլենկոն է նշում, տերմինը չի կարող լինել լիարժեք (61, 94): Եվ այս առումով ցանկալի է, որ գիտության տարբեր բնագավառներում առավելությունն ընդհանուր առմամբ տրվի տերմին-բնորոշումներին:

Քանի որ գիտական հասկացությունների ըմբռումները փոփոխվում և զարգանում են, ուստի տերմինը զխավորապես պետք է հարաբերակցի ճանաչողության որոշակի աստիճանում գտնվող հասկացությանը: Այստեղից մասնագետները հետևյալ կարևոր նախապայմանն են առաջ քաշում՝ տերմինի բովանդակությունը պետք է հավասարաբեք լինի հասկացությանը, և տերմինը չպետք է հակասի հասկացությանը: Սա, փաստորեն, գիտության լեզվում ու տերմինաբանական համակարգերում պատճառաբանվածության դրսևորման ու պահպանման առաջնակարգ նախապայմաններից մեկն է: Սակայն, ինչպես նշվեց, հիշյալ հարաբերակցությունը միշտ չէ, որ պահպանվում է: Ժամանակի ընթացքում անհամապատասխանություն է առաջանում հասկացության և այն բնորոշող տերմինի բովանդակության միջև: Տվյալ դեպքում այդ իսկ հասկացությունը բնորոշող տերմինի իրական իմաստը և բովանդակությունը պետք է ճշգրտվեն: Հակառակ դեպքում տերմինի նման իմաստը կարող է հասկացության նոր բովանդակության ճիշտ ըմբռնմանը արգելք հանդիսանալ: Այսինքն, պատճառաբանվածության դրսևորման համար անհրաժեշտ է, որ տերմինների կերտման հիմքում

դրված լինեն հասկացություններն իրենց զարգացման ընթացքի մեջ դիտարկող դասակարգումներ:

Բացի այդ, տերմինակերտման դեպքում նախապես պետք է ճշգրտորեն որոշվի այս կամ այն հասկացության տեղը տվյալ համակարգի կամ էլ դասակարգողական տվյալ շարքի մնացած հասկացությունների շրջանում: Ցանկալի է, որ տարբեր բնագավառների տերմինաբանությունը, տերմինների առանձին խմբերը գիտության զարգացման որոշակի փուլում ըստ հնարավորին իրենց մեջ արտացոլեն հասկացությունների փոխկապակցված ու փոխալսյալմանավորված հարաբերությունները:

Պատճառաբանվածության դրսևորման գործում, ինչպես նշվեց, մեծ դեր կարող են խաղալ տերմինների հիմքում դրվող հասկացությունների հատկանիշները: Այս կապակցությամբ մասնագետները նշում են, որ ընտրված հատկանիշները, առաջին հերթին, պետք է ճշգրտորեն բնութագրեն գիտական հասկացությունները և հնարավորության սահմաններում շառաջացնեն կողմնակի զուգորդություններ ու չհանգեցնեն կեղծ եզրակացությունների (86, 26—27): Նման պայմաններին, թվում է, որ կարող են բավարարել հասկացությունների անհրաժեշտ և բավարար հատկանիշները: Հասկանալի է, որ դրանք պետք է համապատասխանեն դասակարգողական մեկ աստիճանի վրա գտնվող նույն կարգի մնացած հասկացությունների հատկանիշներին: Այսինքն, նման կարգի հասկացությունների բնորոշման համար ընտրված հատկանիշները, ինչպես իրականում երբեմն պատահում է, չպետք է լինեն տարբեր կարգի: Հատկանիշների առանձնացման վրա հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել նաև այն պատճառով, որ դրանց անունները, ինչպես հայտնի է, դրվում են հասկացությունների տերմինավորման հիմքում:

Պատճառաբանվածության դրսևորման համար անհրաժեշտ է, որ հասկացությունների տերմինավորման նպատակով գործածվող համագործածական բառերն ընդհանուր գրական լեզվից ընտրվեն հիմնավորված կերպով և ճշգրտորեն: Հասկանալի է, որ նման դեպքերում բառի մաստի և տերմինացվող հասկացության էական հատկանիշների միջև ինչ-որ համապատասխանություն պետք է լինի: Բայց միևնույն ժամանակ, գիտական հասկացությունը տերմինավորող համագործածական բառը պետք է գործածվի ոչ թե իր սովորական իմաստով, այլ անհրաժեշտ է, որ այն ունենա մասնագիտացման ու տերմինացման բարձր աստիճան:

Գիտության զարգացման արդի շրջանում, ինչպես նշվեց, տերմին-

ները որոշակի տեսութեան տարրեր են: Ուստի պատճառաբանվածութեան դրսևտրման համար անհրաժեշտ է, որ գործածութեան մեջ մտած տերմիններն իրենց հասկացական հիմքով բխեն համապատասխան տեսութիւններից և այս կամ այն բնագավառում ունենան տրամաբանորեն հիմնավորված ու ճշգրիտ կիրառութիւն:

Տերմինագործածութեան պատճառաբանվածութիւնը կարելի է պահանջել, եթէ գիտութեան այլ բնագավառներից տերմինները փոխառվեն անհրաժեշտաբար և հիմնավորված կերպով: Դրա համար նախապես անհրաժեշտ է հաշվի առնել երկու բնագավառների օբյեկտների համապատասխանութեան աստիճանը, երևութիւնների ու իրակութիւնների հարաբերակցութեան բնութիւնը և նման կարգի մի շարք այլ կարևոր հանգամանքներ:

Տերմինները բարձր աստիճանի պատճառաբանվածութեամբ օժտված կլինեն, եթէ բառակազմական մասնիկների, ձևութիւնների ընտրութեան հարցում ճիշտ մոտեցում ցուցաբերվի: Յանկալի է, որ դրանք գիտութեան տվյալ բնագավառում ունենան այս կամ այն աստիճանի մասնագիտացում և կիրառվեն որոշակի կարգի հասկացութիւններ բնորոշող տերմինների կերտման դեպքում: Բացի այդ, մասնագիտացված բառակազմական մասնիկները լավ կլինի, որ օժտված լինեն դասակարգողական հատկութեամբ:

Հասկացական-կառուցվածքային տեսակետից պատճառաբանվածութիւնը կարող է դրսևտրվել, եթէ տվյալ տերմինի ու մյուսների միջև առկա է բառակազմական որոշակի կապ, և տերմինն իր ուրույն տեղն ունի տերմինների ամբողջ համակարգում: Տվյալ դեպքում ցանկալի է, որ տերմինի բաղադրիչներից որևէ մեկը պատկանի որոշակի շարքի: Եվ, ընդ որում, ավելի լավ կլինի, որ այդ բաղադրիչը հանդես գա միայն տվյալ շարքի տերմինների կազմի մեջ, որպեսզի տերմինաբանական մի շարքը սահմանազատվի մյուսից:

Նման պահանջները, ինչպես հայտնի է, բխում են տերմինի և տերմինաբանութեան իսկ առանձնահատկութիւններից: Քանի որ տերմինաբանութեան էական հատկութիւններից մեկը համակարգայնութիւնն է, ուստի առանձին տերմինների համար առավել կարևորը ոչ այնքան գիտական հասկացութիւնների մանրակրկիտ բացահայտումն է (առավել ևս, որ ոչ մի բազմաբաղադրիչ տերմին չի կարող տալ համապատասխան հասկացութեան լրիվ բնորոշումը), որքան որ տվյալ համակարգի մյուս տերմինների հետ փոխկապակցվածութեան և համապատասխանաբար դրանց շրջանում իր տեղի ճշգրիտ մատնանշումն է:

Քանի որ բաղադրիչների քանակն ազդում է տերմինների պատ-

ճառաբանվածութեան աստիճանի վրա, ուստի բաղադրյալ տերմիններ կերտելիս նախապատվութիւնը պետք է տրվի երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կառուցներին: Ինչպէս հայտնի է, սրանք էլ հենց համապատասխանում են հայերենի տերմինների «միջին երկարութեանը»:

Պատճառաբանվածութեան դրսևորման գործում, հայտնի է, թե որքան կարևոր նշանակութիւն ունի մայրենի լեզվի ներքին միջոցների հաշվին կատարված տերմինակերտումը, այսինքն, տերմինների ազգային ձևը: Այս առումով, հասկանալի է, որ հնարավորութեան դեպքում հարկավոր է հրաժարվել անհարկի փոխառութիւններից** և նախապատվութիւնը պետք է տալ տերմինների ու անվանակարգային նշանների կերտման նման ուղղով***:

Խոսելով պատճառաբանվածութեան իրականացման ուղիների մասին, հասկանալի է, որ բոլորովին էլ չենք անտեսում նաև այն հանգամանքը, որ առանձին դեպքերում հեշտ չէ բարձր աստիճանի պատճառաբանված ու հստակ կերպով կողմնորոշող տերմինների ստեղծումը: Դժվարութիւնը գլխավորապէս պայմանավորված է այն հանգամանքով, որ վերացական ու վերացարկված հասկացութիւնների տերմինավորման համար որպէս հիմնաբառ համագործածական բառապաշարից երբեմն ընտրվում են կենցաղային (առտնին) հասկացութիւններ արտահայտող բառեր (տե՛ս նաև՝ 38, 67):

Փաստորեն, պատճառաբանվածութեան վերը քննարկված դրսևորումներն ու տեսակներն ինչ-որ շարքով համընկնում են առաջագրվող պահանջներին (տերմինների պատճառաբանված լինելու նախապայմաններին): Եվ սա բնական է, քանի որ տերմինների կերտումը և ընտրու-

* Ի դեպ, Վ. Պ. Դանիլենկոն գտնում է, որ տերմինաբանութեան միջազգայնութեան միտումը նույնպէս նպաստում է պատճառաբանվածութեան դրսևորմանը (սա առավել ևս վերարհերում է ժամանակակից գիտութեան նոր բնագավառների տերմինաբանութեանը): Ըստ նրա, պատճառաբանվածութիւնը տվյալ դեպքում ձեռք է բերվում հունալատինական բաղադրիչների հիման վրա՝ տերմինների նպատակահարմար կազմութեան և ճանաչման միջոցով (61, 63—64):

** Որոշ մասնագետներ (Ա. Վ. Իսաչենկո, Վ. Պ. Բերկով և ուրիշներ) գտնում են, որ փոխառյալ և բնիկ տերմինների շրջանում պատճառաբանվածութիւնը դրսևորվում է միանգամայն տարբեր ձևով: Այս մասին տե՛ս (69, 19) (89, 29):

*** Տերմինակերտման վերահիշյալ ուղին ամենէին էլ արգելք չի հանդիսանում տերմինաբանութեան միջազգայնութեան իրականացմանը: Վերջինիս էութիւնը, ինչպէս հայտնի է, միակ, համաձայնեցված հասկացութիւնների հաստատումն է (և ոչ թե, այսպէս կոչված, «միջազգային տերմինների» անհարկի փոխառութիւնը), որոնցից յուրաքանչյուրն արտահայտվում է տերմինի ազգային ձևով (53, 78): Այս մասին մանրամասն տե՛ս (17, 41—46):

թյունը հիմնականում կատարվում են գիտակցորեն՝ ըստ նախապես մշակված հիմունքների և պահանջների: Իսկ երբ տերմինները պատճառաբանվածությամբ իրենց հատկություններով ու դրսևորումներով համապատասխանում են առաջադրվող պահանջներին, ապա նման իրողությունը վկայում է գիտության այս կամ այն բնագավառի լեզվի, մասնավորապես նրա տերմինաբանության մշակվածության ու կարգավորվածության մասին:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

1. Վ. Ի. Լենին, Փիլիսոփայական տետրեր, Երկեր, 4-րդ հրտ., հ. 38:
2. Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954:
3. Յ. Էնգելս, Բնության գիտելիության, Երևան, 1969:
4. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
5. Ա. Ա. Աբրահամյան, Ի՞նչ են պատմում բառերը, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1973, № 5—6, էջ 72—82:
6. Ս. Գ. Աբրահամյան, Ղեկավարվել գիտական սկզբունքներով, ԼՂԳ, 1970, № 12, էջ 43—48:
7. Է. Ռ. Աբրայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981:
8. Է. Բ. Ազրյան, Տերմինագիտություն (դասախոսություն), Երևան, 1978:
9. Հ. Աճառյան, Կիսակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, Ներածություն, Երևան, 1955:
10. Ռ. Գ. Ալվյան, Լեզվական նշանի իմացաբանական մի քանի հարցեր, Երևան, 1972:
11. Հ. Խ. Բաբոյան, Ազգային ու միջազգային տերմինի ու տերմինաշինության մեջ, ԼՂԳ, 1971, № 1, էջ 97—102:
12. Գ. Ա. Բրուտյան, Փիլիսոփայություն և լեզու, Երևան, 1972:
13. Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
14. Ռ. Ա. Իշխանյան, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Երևան, 1981:
15. Լ. Հ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, Լեզվի և ոճի հարցեր (ժողովածու), հ. 4, Երևան, 1977, էջ 200—335:
16. Լ. Հ. Ղազանչյան, Տերմինաբանության մի քանի հարցեր, ԲժՀ, 1971, № 3, էջ 225—232:
17. Լ. Հ. Ղազանչյան, Տերմինաբանության միջազգայնության հարցի շուրջ, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1972, № 1, էջ 41—46:
18. Ա. Ն. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971:
19. Բ. Ա. Պավլով, Ա. Պ. Տերեբեև, Օրգանական քիմիայի դասընթաց, Երևան, 1977:
20. Գ. Բ. Զառուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
21. Գ. Բ. Զառուկյան, Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը, ԼՂԳ, 1971, № 9, էջ 93—98:

22. Գ. Բ. Ջանուկյան, է. Բ. Աղայան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980:
23. Գ. Սևակ, Գիտատեխնիկական տերմինարանության մշակման և կարգավորման խընդիրները Հայկական ՍՍՀ-ում, Տերմինարանության և խոսքի մշակույթի հարցեր, պրակ I, Երևան, 1976, էջ 62—71:
24. Ա. Մ. Սաֆիայան, Համահիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971:
25. Խորհրա Վիենր, Ես մաթեմատիկոս եմ, Երևան, 1969:
26. Л. А. Абрамян, Гносеологические проблемы теории знаков. Ереван, 1965.
27. Э. Г. Аветян, Природа лингвистического знака. Ереван, 1968.
28. Н. Н. Амосова, Этимологические основы словарного состава современного английского языка. М., 1956.
29. Античные теории языка и стиля. М.—Л., 1936.
30. Аристотель, Аналитики. Первая и вторая. Перевод с греческого. Госполитиздат, 1952.
31. Э. Р. Атаян, Языковая единица как знаковая система (к соотношению признаков «естественности» и «условности» в языковом знаке).—Семантика, лингвистика и проблемы коммуникации. Тезисы докладов. Ереван, 1974, с. 24—26.
32. О. С. Ахманова, К вопросу об основных понятиях метаязыка лингвистики.—Вопросы языкознания (ВЯ), 1961, № 5, с. 115—121.
33. О. С. Ахманова, Основная терминология дескриптивной лингвистики.—Лексикографический сборник, вып. VI, 1963, с. 131—138.
34. О. С. Ахманова, Словарь лингвистических терминов. М., 1969.
35. М. А. Балабан, О грамматической терминологии (письмо в редакцию).—Иностранные языки в школе (ИЯШ), 1956, № 1, с. 98—101.
36. Ш. Балли, Общая лингвистика и вопросы французского языка. Перевод с французского. М., 1955.
37. Э. Бенвенист, Общая лингвистика. Перевод с французского. М., 1974.
38. М. Г. Бергер, Лингвистическое требование к термину.—Русский язык в школе (РЯШ), 1965, № 3, с. 64—68.
39. Л. Блумфильд, Язык. Перевод с английского. М., 1968.
40. И. А. Бодуэн де Куртенэ, Избранные труды по общему языкознанию, т. 1—2, М., 1963.
41. Е. А. Бокарев, Стихийное и сознательное в языке.—Русская речь, 1967, № 2, с. 10—15.
42. Большая советская энциклопедия, 3-е изд., т. 2, 6, 10, 11, 27.
43. Р. А. Будагов, Введение в науку о языке. М., 1958.
44. Р. А. Будагов, Литературные языки и языковые стили. М., 1967.
45. А. М. Бутлеров, Избранные работы по органической химии. М., 1951.
46. Е. А. Быстрова, Из истории русской литературоведческой терминологии первой половины XIX века. Автореферат кандидатской диссертации (АКД), Ашхабад, 1965.
47. Ж. Вандрнес, Язык (Лингвистическое введение в историю). Перевод с французского. М., 1937.
48. С. Р. Вартазарян, От знака к образу. Ереван, 1973.
49. А. А. Ветров, Семантика и ее основные проблемы. М., 1968.

50. *Н. Винер*, Кибернетика и общество. М., 1958.
51. *В. В. Виноградов*, Избранные труды. Лексикология и лексикография. М., 1977.
52. *Г. О. Винокур*, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии.—Труды МИФЛИ, т. V, 1939, с. 3—54.
53. Вопросы терминологии. Материалы всесоюзного терминологического совещания (сборник). М., 1961.
54. *И. Воробьева*, Язык земли. Новосибирск, 1973.
55. *Т. В. Гамкрелидзе*, К проблеме произвольности языкового знака.—ВЯ, 1972, № 6, с. 33—39.
56. *Гегель*, Философия духа. Энциклопедия философских наук, т. III, М., 1977.
57. *Э. Геллнер*, Слова и вещи. Перевод с английского, М., 1962.
58. *В. И. Георгиев*, Проблемы возникновения индоевропейских языков.—ВЯ, 1956, № 1, с. 43—67.
59. *В. фон Гумбольдт*, О различии организмов человеческого языка и влиянии этого различия на умственное развитие человеческого рода. Введение во всеобщее языкознание. СПб., 1859.
60. *Н. В. Гяч., В. М. Павлов*, О мотивированности аббревиатур.—Материалы семинара по проблеме мотивированности языкового знака. Л., 1969, с. 35—39.
61. *В. П. Даниленко*, Русская терминология. М., 1977.
62. *Г. Б. Джаукян*, Общее и армянское языкознание. Ереван, 1978.
63. *Л. Ельмолев*, Можно ли считать, что значения слов образуют структуру?—Новое в лингвистике. Вып. II, М., 1962, с. 117—172.
64. *О. Есперсен*, Философия грамматики. Перевод с английского. М., 1958.
65. *Л. П. Ефремов*, К вопросу о мотивировке фразеологических единиц.—Вопросы словообразования и фразеологии. Программа работы и тезисы докладов на расширенном заседании кафедры русского языка—11—12 мая 1962 г., Фрунзе, 1962, с. 43—45.
66. *М. Н. Захарова*, Из наблюдений над возникновением наименований.—УЗ Кишиневского гос. ун-та, т. 37, филологический, Кишинев, 1959, с. 69—73.
67. *В. А. Звегинцев*, Проблема знаковости языка. М., 1956.
68. *П. Ивич*, К проблеме лингвистической терминологии и условных обозначений в славянских языках.—ВЯ, 1963, № 1, с. 18—28.
69. *А. В. Исаченко*, Термин-описание или термин-название?—Славянская лингвистична терминология. Сборник статьи I. София, 1962, с. 19—25.
70. *А. В. Исаченко*, Хроникальная заметка.—ВЯ, 1960, № 5, с. 149—151.
71. *Л. О. Казанчян*, Системно-структурный анализ армянских лингвистических терминов. АКД, Ереван, 1975.
72. *Р. Карнап*, Значение и необходимость. Исследование по семантике и модальной логике. М., 1959.
73. *С. Д. Кацнельсон*, Содержание слова, значение и обозначение. М.—Л., 1965.
74. *Т. Р. Кияк*, Оценка степени мотивированности терминологической лексики (на материале немецких научно-технических терминов). АКД, Львов, 1977.
75. *Георг Клаус*, Сила слова. Гносеологический и прагматический анализ языка. Перевод с немецкого. М., 1967.

76. *Н. Б. Ковалева*, О мотивированности географических названий в связи с восприятием их населением.—Вопросы лексики и грамматики русского языка. Кемерово, 1974, вып. 1, с. 40—48.
77. *А. Н. Кожин*, О характере отношений в терминованных устойчивых выражениях.—УЗ МОПИ им. Н. Крупской, т. 160. Русский язык, вып. 2, с. 71—115.
78. *Б. Кроче*, Эстетика как наука о выражении и как общая лингвистика, № 1, Теория, М., 1920.
79. *Н. Б. Кузьмина*, Морфолого-семантический очерк русской терминологии языкознания. АКД. Минск, 1971.
80. *И. И. Левинштейн*, Бездумные термины и ложные взгляды.—Алтечное дело, 1963, т. 12, № 4.
81. *К. А. Левковская*, Теория слова, принципы ее построения и аспекты изучения лексического материала. М., 1962.
82. *Лейбниц*, Новые опыты о человеческом разуме. Перевод П. С. Юшкевича, 1936.
83. Ленинская теория отражения и современная наука. Отражение, познание, логика. София, 1973.
84. *А. С. Литвиненко*, Термин и метафора.—УЗ МГПИИЯ, т. VIII. Экспериментальная фонетика и психология речи, 1954, с. 253—277.
85. *А. Ф. Лосев*, Философия имени. Издание автора. М., 1927.
86. *Д. С. Лотте*, Основы построения научно-технической терминологии. М., 1961.
87. *Ж. Марузо*, Словарь лингвистических терминов. М., 1960.
88. *С. С. Маслова-Лашанская*, Из заметок по шведской лексикологии.—УЗ ЛГУ, № 243. Серия филологических наук. Вып. 42. Очерки по лексикологии, фразеологии и стилистике, II, Л., 1958, с. 24—40.
89. Материалы семинара по проблеме мотивированности языкового знака, Л., 1969.
90. *А. Мейе*, Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.—Л., 1938.
91. *Г. П. Мельников*, Типы мотивированности языковых знаков.—Материалы семинара по проблеме мотивированности языкового знака. Л., 1969, с. 3—6.
92. *А. И. Моисеев*, Мотивированность слов (Мотивированность сложных имен существительных со значением лица в русском языке).—УЗ ЛГУ, № 322. Серия филолог. наук, Вып. 68. Исследование по грамматике русского языка—IV, Л., 1963, с. 121—136.
93. *Э. А. Натансон*, Логический аспект образования термина, репрезентирующих смежные понятия.—Научный симпозиум «Место терминологии в системе современных наук». Москва, 1969. Тезисы докладов и сообщений, М., 1970, с. 60—64.
94. *В. М. Овчаренко*, Лингвистический анализ семантической структуры английских научно-технических терминов.—Вестник Харьковского ун-та, № 12. Серия филологическая, вып. 2, 1965, с. 22—31.

95. В. М. Овчаренко, Онтологические аспекты мотивированности языковых знаков, в том числе терминов.—Научный симпозиум «Семантические проблемы языков науки, терминологии и информатики», ч. 2. Материалы симпозиума—рефераты и аннотации. М., 1971, с. 417—423.
96. В. М. Овчаренко, Принципы структурно-семантического анализа научно-технических терминов.—Вопросы литературоведения и языкознания. Научная конференция преподавателей филологического факультета Харьковского гос. ун-та. Тезисы и авторефераты докладов. Сентябрь 1965, вып. 2. Харьков, 1965, с. 66—69.
97. А. Ольшки, История научной литературы на новых языках. ГОНТИ, т. 1, 1933.
98. Особенности номинации в области научно-технической терминологии.—Лексика современного русского литературного языка. М., 1968, с. 151—185.
99. Т. Л. Павленко, О мотивированности составных номенклатурных обозначений.—Очерки по лексике и фразеологии. Сборник статей. Ростов н/Д, 1976, с. 3—8.
100. Г. Пауль, Принципы истории языка. Перевод с немецкого. М., 1960.
101. В. Пизани, Этимология (история—проблемы—метод). Перевод с итальянского. М., 1956.
102. Р. Г. Пиотровский, К вопросу об изучении термина.—УЗ ЛГУ, № 161, Серия филолог. наук. Вып. 18. Вопросы грамматического строя и словарного состава языка—2. Л., 1952, с. 21—36.
103. Платон, Сочинения. В 3-х т. (Пер. с древнегреч. под общ. ред. А. Ф. Лосева и В. Ф. Асмуса. Вступит. статья А. Ф. Лосева), т. 1, М., 1968.
104. Э. В. Побережниченко, К вопросу о мотивированности термина (На материале русской и немецкой лесохозяйственной терминологии).—О языке, стиле, методе. Некоторые проблемы теории и истории филологии. Тамбов, 1974, с. 92—99.
105. Проблемы мотивированности языкового знака (сборник статей). Калининград, 1976.
106. А. А. Реформатский, Термин как член лексической системы языка.—Проблемы структурной лингвистики—1967. М., 1968, с. 103—125.
107. Н. П. Романова, О мотивированности исконных и заимствованных терминов.—Вопросы терминологии и лингвистической статистики, Межвузовский тематический сборник. Воронеж, 1976, с. 18—26.
108. К. А. Свасьян, Проблема символа в современной философии. Ереван, 1980.
109. Секст Эмпирик, Сочинения в двух томах. Т. 1, Против ученых. Общая редакция, вступительная статья и перевод с древнегреческого А. Ф. Лосева, М., 1975.
110. В. Н. Семичев, Вопросы терминологического словообразования (на материале терминологии литературоведения). АКД. М., 1968.
111. В. Н. Семичев, Принцип структурной мотивированности термина и специализация модели терминообразования.—Коми государственный педагогический институт. Научная конференция, посвященная 50-летию Советской власти. Сытывкар, 1967.

112. Славянская лингвистична терминология (Сборник статей I). София, 1962.
113. *Ф. де Соссюр*, Труды по языкознанию. Переводы с французского языка, под редакцией А. А. Холодовича. М., 1977.
114. *Е. П. Стемковская*, Мотивированность терминов сейсморазведки.—Научный симпозиум: «Семиотические проблемы языков науки, терминологии и информатики», ч. 2. Материалы симпозиума—рефераты и аннотации. М., 1971, с. 456—458.
115. *О. И. Стрижевская*, К проблеме мотивированности слов (на материале простых минералогических терминов).—Лексика, М., 1973, с. 26—37.
116. *В. И. Ткачук*, К вопросу о мотивировке новых собственных названий.—Исследования по русскому языку, вып. 3, Днепропетровск, 1973, с. 39—43.
117. *И. Е. Торопцев*, Лексическая мотивированность.—УЗ ОГПИ, т. 22 (историко-филологический факультет). Орел, 1964, с. 3—178.
118. *Р. М. Трифонова*, Истоки русской грамматической терминологии, АКД, М., 1967.
119. *Р. М. Трифонова*, О месте мотивированных и немотивированных терминов (на материале русской грамматической терминологии).—Материалы и тезисы докладов XV итоговой научной конференции. Оренбургский пед. ин-т, 1967, с. 108—109.
120. Труды по знаковым системам, УЗ Тартуского гос. ун-та, I—X, 1964—1978.
121. *Э. Г. Туманян*, Структура индоевропейских имен в армянском языке: Опыт реконструкции. М., 1978.
122. *А. С. Чикобава*, Проблема языка как предмета языкознания. М., 1959.
123. *Н. М. Шанский*, В мире слов. М., 1978.
124. *Н. М. Шанский*, Очерки по русскому словообразованию и лексикологии. М., 1959.
125. *Н. М. Шанский*, Фразеология современного русского языка. М., 1969.
126. *А. Б. Шапиро*, Второе совещание лингвистической секции международной терминологической комиссии при международном комитете славистов (Хроника).—ИАН СССР ОЛЯ, т. 21, вып. 4, 1962, с. 372—373.
127. *А. Б. Шапиро*, Пражское совещание по вопросам лингвистической терминологии (состоявшееся в Праге с 11 по 15 марта 1960 г.)— ИАН СССР, ОЛЯ, т. 19, вып. V, 1960, с. 443—445.
128. *Л. А. Шепурев*, О мотивированности структуры качественных терминов.—Лексика. М., 1973, с. 38—48.
129. *Л. А. Шепурев*, Структурная и семантическая мотивированность качественных терминов. АКД, М., 1978.
130. *Д. Н. Шмелев*, О понятии «фразеологическая связанность».—ИЯШ, 1970, № 1, с. 20—27.
131. *Г. Шпет*, Внутренняя форма слова. Этюды и вариации на темы Гумбольдта. М., 1927.
132. Языковая номинация. Общие вопросы. М., 1977.